

№ 47

ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼ ՑԵՎ ԱՇԽՈՒԺԱՑՆԵԼ
ԽՈՐՅՈՒԹՆԵՐԻ ԿԱԶՄ-ՄԱՍՍԱՑԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

(ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄ-ՄԱՍՍԱՑԱԿԱՆ ԽՈՐՅՈՒԹԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱԽՆ ԿԵՆՏՐՈՆԾԿՈՄԻ

1938

ՅԵՐԵՎԱՆ

352
Կ-49

51 MAR 2010

Պրայետարմիք բոլոր յերկրների, միացե՛ք

359
4-49
Մ. Մ.

№ 47

ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼ ՑԵՎ ԱՇԽՈՒԺԱՑՆԵԼ
ԽՈՐՅՈՒԹԻՆԵՐԻ ԿԱԶՄ-ՄԱՍՍԱՑԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

605 38
(ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄ-ՄԱՍՍԱՑԱԿԱՆ ԽՈՐՅՈՒԹԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱԽ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ

1983

ՅԵՐԵՎԱՆ

ԽՈՐՅՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄ-ՄԱՍՍԱՑԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ*)

ՀԱՆՈՒՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՐԱՅԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ
ԸՆԿԵՐՆԵՐ' բ.

Խորհուրդների հանրապետական կազմ-մասսայական խորհրդակցության մենք տալիս ենք շատ մեծ նշանակություն։ Այս խորհրդակցությունից հետո, մենք մեր կազմ-մասսայական աշխատանքների մեջ պետք է առաջ բերենք վճռական և արմատական բեկում։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ և նրա գլխավոր գծի համար մղվող պայքարի չնորհիվ, մեզ հաջողվեց առաջին հնդամյակում սոցիալիստական շինարարության բոլոր Փրոնտներում թե՛քաղաքում և թե՛ գյուղում ձեռք բերել անհախընթաց պատմական նշանակություն ունեցող հաղթանակներ։ Առաջին հնդամյակում, թե՛քաղաքում և թե՛ գյուղում մենք վերջնականապես և անվերադարձորեն լուծեցինք լենինյան «ո՞վ—ում»-ի խնդիրը հոգուտ սոցիալիզմի։

Սոցիալիզմի կառուցման 1-ին հնդամյակում մեր ձեռք բերած պատմական հաջողության հիման վրա, մեր կուսակցությունը և խորհրդային իշխանությունը հնարավորություն ստացան։ 2-րդ հնդամյա պլանում առաջադրելու այնպիսի հսկայածավալ և հոյակապ խնդիր, վորագին ե՝

*) Այս ճառը համառոտն և այն ընդարձակ զեկուցման, վորագին և ընկերությունը հանրապետական կազմ-մասսայական առաջին խորհրդակցության 1932 թ. նոյեմբերի 17ին նիստում։

«Կապիտալիստական տարրերի և առհասարակ դասակարգերի վերջնական վերացումը, դասակարգային տարրերությունների և շահագործում ծնող պատճառների լիակատար վոչնչացումն եկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ, կապիտալիզմի մնացորդների հաղթահարումը, յերկրի ամբողջ աշխատավոր բնակչության վերածումն անդասակարգ սոցիալիստական հասարակության դիտակից և ակտիվ շինարարների»։ Մեր կուսակցության 17-րդ կոնֆերանսի պատմական այս վորոշումների լիակատար կենսագործումը խորհուրդներից պահանջում ե՝ ել ավելի անխնա դարձնել պայքարը դասակարգային թշնամու գեմ, վորն իր վերջին բեկորները փրկելու համար կատաղի պայքար և կաղմակերպում մեր բոլոր ձեռնարկումների գեմ, և ել ավելի ակտիվ և աշխատում, հատկապես մեր հետամնացողակներում։ Նրա պայքարն ընդունում ենոր ձեեր, նոր մեթոդներ։ Նա մտնում ե կոլտնտեսություն և ներսից փորձում ե պայթեցնել այն, ամենուրեք փորձում ե ծավալել վնասարարություն, հրահրում ե անտնտեսավարություն, գողություն և պետական, կոլտնտեսական սոցիալիստական դույքի փչացումն ու թալանը։

Կա տեսակետ, վոր 2-րդ հնդամյակի ընթացքում, համատարած կոլեկտիվացման պայմաններում, մեր վիթխարի հաղթանակների հետևանքով դասակարգային թշնամու դիմադրությունը, պայքարի սրությունը վերանալու յե, կամ պրոլետարական պետական դերնվազելու յե և յենթակա յե «մարման»։

Ինչ խոսք, վոր այս և նման վտանգավոր «թեորիաները» արտահայտություն են դասակարգային թշնամու և նրա ագենտների՝ զանազան դույնի ու ուսնդի ոսորությունների բարձրացրած վայնասունի, վորով նրանք շանկանում են մեր յերկրի բանվոր դասակարգի և վողջ աշխատավորության ուշադրությունը հեռացնել՝ դասակարգային թշնամու գեմ պայքարը սրելուց։ Ընդհակառակությունը 17-րդ կուսակցության 2-րդ հնդամյակը կաղմակերպելու դիրեկտիվների մեջ ասում ե.՝

4

«Վոր հետազայում ևս անխուսափելի յե դասակարգային պայքարի սրումն առանձին մոմենտներում, հատկապես առանձին շրջաններում և սոցիալիստական շինարարության առանձին բնագավառներում, վոր դրա հետմեկտեղ ընդգծվում ե աշխատավորության առանձին խավերի ու խմբերի վրա բուրժուական ազդեցությունների մնալու, իսկ վորոշ գենքերում նաև ուժեղանալու անխուսափելիությունը, պրոլետարական խորթ դասակարգային ազդեցությունները դեռ յերկար ժամանակ բանվորների և անդամ կուսակցության մեջ թափանցելու անխուսափելիությունը։ Այդ նկատառումով կուսակցության առաջ խնդիր է դրվում ամրացնել պրոլետարական դիկտատորական և ել ավելի ծավալել պայքարն ընդգեմ ոպորտունիվմի»։

Ներկա ետապում թե հնարավոր ե և թե պահանջվում է պրոլետարական պետության վոչ թե թուլացում, այլ ընդհակառակն անհրաժեշտ է դառնում նրա ամեն կերպ ուժեղացումը, վորպես սոցիալիստական անդասակարգ հասարակություն հիմնելու կարևորագույն, վործոնը։ Բնկ. Ստալինն ասում ե՝ «Մենք պետության մահացման կողմնակից ենք, մենք միաժամանակ կողմնակից ենք նաև պրոլետարիատի դիկտատորայի ամրացման, վորը մինչեւ այժմ գոյություն ունեցող պետական իշխանություններից ամենահզոր իշխանությունն ե։ Պետական իշխանության բարձրագույն զարգացում՝ պետական իշխանության մահացման պայմաններ ստեղծելու նպատակով—ահա մարքսիստական Փորմուլան։ Առ «Հակասական ե»։ Այս «Հակասական ե», բայց այս հակասությունը կենառնակ ե և ամբողջովին ցոլացնում ե մարքսյան դիալեկտիկան»։

Խորհուրդներն ավելի ուժեղ պայքար պետք է ծավալեն՝ կուսակցության գլխավոր գծի համար մղվող պայքարում։ Անհրաժեշտ է պայքարն ել ավելի ուժեղացնել հատկապես աջ թեքման գեմ, վորպես ներկա ետապի դիմավոր վտանգի, վորովհետեւ աջերն իրենց վարած քաղաքականությամբ թուլացնում են մեր պայ-

5

քարի թափը, հոռետես տրամադրություններ են սեր-
մանում: Նույնպիսի պայքար պետք է ծավալել նաև
«ձախ» թեքման դեմ, վորովհետեւ «ձախ»-երն իրենց
վարչարարական մեթոդներով և չափազանցություննե-
րով բազմաթիվ դժվարություններ են ստեղծում մեղ
համար, թուլացնելով մեր բայլշենիկյան պայքարի թա-
փը: Միայն կուսակցության լենինյան դժի անշեղ կի-
րառման հիման վրա, մեր խորհուրդները հնարավորու-
թյուն կունենան՝ բայլշենիկյան վճռականությամբ կեն-
սադործելու շրջ հնդամյակի վիթխարի խնդիրները:

ԾԱՎԱԼԵԼ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎՔԻԵՐԸ

Ներկա ետապի խնդիրները հատկապես խորհրդնե-
րից պահանջում են՝ քաղաքական-տնտեսական աշխա-
տանքի ավելի բարձր վորակ, աշխատանքի նոր ձևերի
կազմակերպում և ավելի մեծ ծավալ տալու աշխատան-
քի նոր, սոցիալիստական մեթոդների կիրառմանը: Աշ-
խատավոր մասսաներին պետական ղեկավարության մեջ
ակտիվորեն և գլխովին ներդրավելու անհրաժեշտու-
թյունը խորհրդների համար դառնում է ներկա ժամա-
նակաշրջանի ամենակենսական հարցերից մեկը: Բնկեր
լենին ասել ե՝

«Մեզ համար կարեորն է պետական ղեկավարության
մեջ ընդդրկել բոլոր աշխատավորներին»: Այդ տեսակե-
տից հազարավոր հարվածային բանվորներին, կոլտըն-
տեսականներին և մենատնտես գյուղացիներին խորհր-
դային աշխատանքների մեջ ներդրավելու գործը գըլ-
խավորելու համար կան մասսայական կազմակերպու-
թյուններ քաղխորհրդներին, ըրջործկոմներին և գյուղ-
խորհրդներին կից: Արդեն մեկ տարուց ավելի յե, վոր
արդյունաբերական ձեռնարկություններին, կոլտնտե-
սություններին, խորհտնտեսություններին և ՄՏ կա-
յաններին կից կազմակերպված են պատգամավորական
խմբակներ և այլն: Այդ մասսայական կազմակերպու-

թյունների աշխատացման, աշխատանքի սոցիալիստա-
կան ձևերի լայն ծավալման, ընկ. Ստալինի պատմա-
կան 6 ցուցումների իրական գործի վերածելու խնդիր-
ները պետք է դառնան խորհրդների՝ աշխատանքների
առանցքը: Այլ կարծում է, վոր առանց լայն մասսանե-
րի, կամ այդ մասսայական կազմակերպությունների
ակտիվ մասնակցության կարելի յե մեր վիթխարի
պլանները կատարել, նա ուղղակի ոպորտունիստ է, նա
բյուրոկրատիզմի և վարչարարության ախտով է վա-
րակված: Այսպիսով հրամայական պահանջ է դառնում
առաջ բերել խորհրդների աշխատանքների մեջ վճռական
վերակառուցում, հատկապես արմատական բեկում նրա
կազմ-մասսայական աշխատանքների բնագավառում,
գնելով այդ վորակապես ավելի բարձր պատիճանի վրա:

Վճռականապես վերակառուցել խորհրդային աշխա-
տանքը

Այս վերջին տարիների ընթացքում մեր խորհրդա-
ները շատ խոշոր նվաճումներ են ձեռք բերել, այդ նվա-
ճումների վրա չե, վոր յես ուղում եմ ձեր ուշադրու-
թյունը կենտրոնացնել, այլ այն մեծ աշխատանքների,
վոր մենք պետք է կատարենք՝ խորհրդների կազմ-մաս-
սայական աշխատանքների մեջ արմատական վերակա-
ռուցում առաջ բերելու գործում: Այդ տեսակետից մենք
չատ ենք մնացել մեր Միության առաջավոր ըրջան-
ներից: Մեր խորհրդների ստորին, մասսայական կազ-
մակերպությունները, սեկցիաները, խորհրդային խըմ-
բակները լավ չեն աշխատում: Դրանց բավական զգա-
լի մասը ձեական գոյություն են քարշ տալիս: Եել դա
բնական արդյունքն է այն փաստի, վոր խորհրդների
կազմ-մասսայական աշխատանքները թերագնահատ-
վում են վորոշ ըրջանային, խորհրդային և կուսակցա-
կան մարմինների կողմից: Այդ թերագնահատությունը
վոչ պակաս բացահայտ է ժողկումատների և հանրապե-
տական այլ կազմակերպությունների կողմից: Մենք

միշտ թերագնահատում ենք, չենք տեսնում հազարավոր հարվածային բանվորների, կոլտնտեսականների և աշխատավոր գյուղացիների որըստորե աճող ակտիվությունը և լիակատար կերպով չենք կարողանում ողտագործել այդ մասաների արտադրական բարձր և ստուգիազմը:

Սորհողներին ուղերատիվ, կոնկրետ և առարկայական զեկավարություն ցույց տալու փոխարեն, մենք հաճախ գանգատվում ենք, վոր նրանք չեն աշխատում: Այս կամ այն տնտեսական-քաղաքական կամպանիաներն անցկացնելիս հարյուրավոր ընկերներ ենք մորիլիցացիայի յենթարկում, կազմակերպում ենք հանձնաժողովներ և գանգզան շտաբներ թե քաղաքում և թե գյուղում, սակայն գործի չենք կոչում շըրջգործիուների, գյուղխորհրդների սեկցիաներին և պատգամավորական խմբակներին, վորոնց մեջ ընդգրկված են հազարավոր ակտիվիստներ:

Որինակ՝ ինչու Ֆինժողկոմատը Փինանսների մորիլիցացիայի գործում չպետք է հենվի գյուղխորհրդներին կից: Փին-Հարկային սեկցիաների վրա, նույնը. կարող են անել նաև՝ կոլտնտկենտրոնը՝ գյուղ-արտադրական սեկցիաների նկատմամբ, Հայկոոպը կամ Մատժողկոմատը՝ կոոպ-առևտրական սեկցիաների և այլպես բոլոր կազմակերպությունները: Մինչդեռ հանրապետական այդ կազմակերպությունները համարյա վոչինչ չեն անում այդ ուղղությամբ: սա անհանդուրժելի յե միանգամայն. ընդհակառակը նրանք պետք է հրավիրեն իրենց գծով աշխատող սեկցիաների, խըմբակների նիստեր, խորհրդակցություններ: Կոլեգիաների և նախագահության նիստերում պետք է լսեն նրանց զեկուցումները, պարզեատրեն լավագույն սեկցիոններին, կազմեն նրանց համար աշխատանքի կոնկրետ ծրագիր, հրահանդիչներ ուղարկեն տեղերը և նրանց ցույց տան գործական ոժանդակություն և ոպերատիվ զեկավարություն:

Կենտգործկոմի կազմբաժինն այս վերջին տարում

մի շարք ձեռնարկումներ ե արել՝ արդյունաբերական ձեռնարկություններում, կոլտնտեսություններին, խորտնտեսություններին և ՄՏ կայաններին կից պատգամավորական խմբակներ կազմակերպելու ուղղությամբ: Զնայած այդ ուղղությամբ վորոշ հաջողություններ ունենք արդյունաբերության մեջ, սակայն մինչև որս շատ քիչ հաջողություններ ունենք դյուղում:

Խորհրդային շատ պատասխանատու աշխատողներ մինչև իսկ չգիտեն, թե ինչ բան է պատգամավորական խմբակը: Ինչ խոսք, վոր այսպիսի գրություն մենք չպետք ե հանդուրժենք, ընդհակառակը պետք ե բոլոր միջոցները ձեռք առնենք, վորպեսզի այս խորհրդակցությունից հետո վճռական բեկում առաջ բերենք մեր կազմ-մասսայական աշխատանքների մեջ: Անհրաժեշտ է, վոր բոլոր շրջգործկոմները 33 թ. հունվարի 1-ից ունենան կազմ-մասսայական բաժիններ իրենց հրահանգիներով: Յեվ զա տեղերում զգում են: 7 շրջգործկոմներ անհրաժեշտությունից յելնելով, արդեն ստեղծել են կազմ-մասսայական բաժիններ, վորոնք բավականին հաջող աշխատանք են ծավալել կազմ-մասսայական աշխատանքների ուղղությամբ:

Գյուղխորհրդների սեկցիաները պետք ե կազմակերպչորեն վերակառուցել, տալով նրանց մասնագիտական թերում:

Որինակ՝ գյուղ-արտադրական խորհրդակցությունը պետք ե բաժանել և ստեղծել մասնագիտական սեկցիաներ՝ տեխնիկական կուլտուրաների, անասնաբուծական, բանջարաբուծական, դաշտավարական և այլն: Գյուղխորհրդի բոլոր սեկցիաները պետք ե լայնորեն ծավալեն աշխատանքի բրիգադային մեթոդները: Խորհուրդ ունեցող գյուղերն իրենց յենթակա գյուղերի աշխատանքներն աշխատացնելու համար, պետք ե համապատասխան սեկցիաներ և հսկիչ պոստեր կազմակերպեն գյուղլիազորին կից:

Կենտգործկոմի կազմբաժինը՝ ինքնաքննադատության՝ կարգով նկատենք, վոր չնայած նկատելի աշխատանք ծավալել ե կազմ-մասսայական աշխատանքների

ուղղությամբ, սակայն պետք է ասել, վոր դեռևս իո-
չոր թերություններ ունենք և պետք է աշխատենք այդ-
թերությունների վերացման համար։ Երջանների մեծ-
մասի հետ ովերտուիվ կենդանի կապը դեռևս թույլ է.
առեղերի հարցումներին ժամանակին և լրիվ պատաս-
խաններ չեն արվում, ինֆորմացիան վատ է դրված։
Ժողկոմատների և մյուս հասարակական կազմակեր-
պությունների կազմբաժինների հետ կապը և նրանց
նկատմամբ զեկալարությունը թույլ է։ Անհրաժեշտ է
այդ թերություններն արագորեն վերացնել և աշխա-
տանքները դնել բարձր աստիճանի վրա։ Անհրաժեշտ է
արձանագրել, վոր ինչպես կենտրոնական նույնպես և
շրջանային թերթերը խորհրդային շինարարության
հարցերը շատ քիչ են լուսաբանում իրենց եջերում։ Ան-
հրաժեշտ է այդ լուրջ բացը ևս վերացնել։ Դրա հա-
մար, իհարկե, չուետք ե մեղադրել միայն թերթերի
խմբագրություններին, պետք ե մենք մեր հերթին խրմ-
բագրություններին ապահովենք վորակյալ հողվածնե-
րով և մանավանդ տեղերի ինֆորմացիոն տեղեկու-
թյուններով։ Այդ ուղղությամբ մեծ գործ զննի անելու
մեր «Խորհրդային-Շինարարություն» ժուրնալը։

Ընկերներ, մեր խորհրդների աշխատանքների աս-
պարիզում շատ ցավոտ հարց ե կարերի պլորեմը։
Գյուղխորհրդների, ըրջործկոմների ապարատների,
մանավանդ կազմ-մասսայական աշխատողների մեջ
շատ մեծ չափերի հասնող հոսունություն գոյություն-
ունի։

Կուտչրջկոմները հաճախ նաև ըրջործկոմները
շուտ-շուտ փոփոխության յեն յենթարկում գյուղխոր-
հրդների նախադաշներին, հրահանգիչներին. լավ աշ-
խատողներին վերցնում են, թույլերին են տալիս։ Հա-
ճախ այդ փոփոխությունները տեղի յեն ունենում
առանց համաձայնեցնելու շահագրգովով՝ հինարկու-
թյան հետ, վորպիսի հանգամանքը բացասաբար և անդ-
րադառնում մեր խորհրդային աշխատանքների վրա։

Խորհրդների աշխատանքն ավելի բարձր աստիճանի

վրա դնելու համար, կենսական նշանակություն ունի
դա. նախադաշների և ըրջործկոմի կազմ-մասսայա-
կան աշխատողների կայուն վիճակ ստեղծելը։ Այդ-
քանի համար անհրաժեշտ է նաև ինչ գնով ել լինի դ. և.
նախադաշների, քարտուղարների և բյուջեատնիկների
անտեսական վիճակը բարելավել։

Ընկերներ.

Յես ընդհանուր և հիմնական գծերով մատնանշեցի
խորհրդների կազմ-մասսայական աշխատանքների առ-
պարբերում մեր ունեցած բացերը և մեր հետազա անե-
լիքները։

Այդ բացերի և անելիքների կոնկրետ, դորձնական-
կազմակերպչական խորհրդների մասին շատ ֆանրամասն-
խոսում են այն ընդարձակ բանաձևերի նախազերը,
վոր մենք ներկայացրել ենք ձեր քննության։ Մեր խոր-
հրդակցության մասնակցող ընկերները, անկասկած
կանեն իրենց դիտողությունները, վորոնց մենք ի նկա-
տի կառնենք այդ բանաձևերի վերջնական խմբագրու-
թյան ժամանակի։ Տեղերից յեկած ընկերների և կենտրո-
նական հիմնարկությունների ներկայացուցիչների ան-
միջական փորձը մեզ համար առանձնապես մեծ արժեք
և ներկայացնում։

Այսպիսի ձեռվ կազմված և ընդունված բանաձև-
փորոշումները կլինեն լավագույն ուղեցույց խոր-
հրդակցության կազմ-մասսայական հետազա աշխատանք-
ների։ Կազմ-մասսայական աշխատանքների ծավալ-
մամբ, բանվոր-կոլտնտեսական աշխատավորական լայն
մասսաների ակտիվությամբ մեր կուսակցության կենտ-
րոմի բայլշերիկան զեկավարությամբ խորհուրդները
քաղաքում թե գյուղում կղառնան բայլշերիկան ավելի
մարտունակ շտաբներ՝ կենսագործելու սոցիալիստական
հասարակության կառուցման յերկրորդ հնդամյակի-
վիթխարի ծրագրերը։

**ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԱՍՏԻՇԱՆԻ ՀԱՍՑՆԵԼ ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐԻ
ԿԱՂՄ-ՄԱՍՍԱՅԱԼԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ***

Ընկերներ.

Հայկենտգործկոմի նախադահությունը, տալով
կաղմ-մասսայալան աշխատանքներին առաջնակարգ
քաղաքական նշանակություն, հրավիրել և Հանրապե-
տական այս խորհրդակցությունը:

Մեր աշխատանքների ներածական խոսքում յես
Հույս եյի հայտնել, վոր այս խորհրդակցությունը հան-
դիսանալու յե խորհուրդների կաղմ-մասսայալան աշ-
խատանքների ծավալման կարևորագույն մի լծակը:

Ճիշտ ե, մեր բոլոր շրջանները չեյին ուղարկել
իրենց ներկայացուցիչները, բացակայում եյին նաև
կենտրոնական-հանրապետական հիմնարկությունները,
մամուլը ևս շատ թույլ եր արձադանքել, կային և կազ-
մակերպչական-տեխնիկական պահասություններ:

Սակայն չնայած այդ ամենին՝ կաղմ-մասսայական
հանրապետական այս խորհրդակցությունն արդարաց-
րեց կենտգործկոմի նախադահության հույսերը:

Մեր աշխատանքներն ընթացան բացլչեիկան ինք-
նաքնադատության նշանաբանի տակ, հայտնաբերվե-
ցին թե կենտրոնի և թե տեղերի կարևոր բացերը, ըր-
ջանի ընկերները հաղորդակից գարձրին իրենց փորձե-
րին, արվեցին բազմաթիվ արժեքավոր դորձնական,
կրնկեատ առաջարկություններ:

Կենտգործկոմի նախադահությունը և մասնավորա-
պես կաղմ-բաժինը հաշվի կառնեն և լայնորեն կողտա-
դորձեն այդ ամենը:

*) Ընկ. Ռ. Դաշտոյանի յեզրափակման խոսքի սրբագրված
պատգրությունը:

Նախ քան խորհրդակցությունը փակելը՝ յես ավե-
լորդ չեմ համարում վորոշ ամփոփումներ կատարել և
միաժամանակ ձեր ուշադրությունը դարձնել մի շարք
կարևոր խնդիրների վրա:

Խորհրդակցությանը մասնակցող ընկերները հիմ-
նականում պատկերացնում են խորհրդային որգանների
և խորհուրդների կազմ-մասսայական աշխատանքների
նշանակությունը:

Սակայն վոչ բոլորը և վոչ միշտ:

Մեր առաջնորդը, ընկ. Ստալինը, խորհուրդների
նշանակության և կառուցվածքի մասին հետեւյալն ե-
ասում՝ —

«Խորհրդային իշխանությունը ամենամասայա-
կան և ամենադեմոկրատիկ պետական կազմակերպու-
թյունն ե»:

Խորհուրդները հանդիսանում են «մասսաների իրենց
անմիջական կազմակերպությունները, այսինքն՝ ամե-
նադեմոկրատիկ և հետեւաբար, մասսաների ամենահե-
ղինակավոր կազմակերպությունները, վորոնք առավե-
լագույնս թեթևացնում են նրանց մասնակցությունը
նոր պետությունը կառուցելու և կառավարելու գոր-
ծում, առավելագույնս՝ դրսերում են մասսաների հե-
ղափոխական յեռանդը, նախաձեռնությունը և ստեղ-
ծագործական ընդունակությունները՝ հին կարգերի
խորտակման, նոր՝ պրոլետարական կարգերի հաստատ-
ման պայքարում»:

«Խորհուրդները հանդիսանում են քաղաքի և գյու-
ղի բոլոր աշխատավորների մասսայական կազմակեր-
պությունը: Խորհուրդների միջոցով են կատարվում
դիկտատուրայի և սոցիալիզմի շինարարության ամրա-
պընդման բոլոր և յուրաքանչյուր միջոցառումները»:

Առաջնորդի այս պատմական-քաղաքական գնահա-
տականը՝ խորհուրդների սիստեմի և կազմ-մասսայա-
կան աշխատանքների նկատմամբ, դժբախտաբար, թե-
րագնահատում են վոչ միայն տեղերի աշխատողները,
այլ նաև կենտրոնի ընկերներ՝ ժողովրդական կոմիսա-

րիատները, համբավետական հիմնարկությունները, կազմակերպությունները, ձեռնարկությունները:

Այդ թերագնահատության արդյունքն է այն վերաբերմունքը, վոր կենտրոնական-հանրապետական որդանները ցույց տվեցին ներկա խորհրդակցության վերաբերմամբ:

Մենք հրավիրել ենք նրանց՝ մասնակցելու մեր աշխատանքներին, ծանոթանալ և ծանոթացնել կազմմասայական աշխատանքների եռության, սիստեմին, ձևերին, լսել իրենց գծով կատարված աշխատանքների մասին, ստանալ նրանց փորձը, դիտողությունները և այլն:

Հակառակ մեր այդ ակընկալումներին, շատ սակավ բացառությամբ, նրանք նույնիսկ չեն բարեհաջել իրենց ներկայացուցիչներին ուղարկել այս՝ խորհրդակցության:

Իսկ նրանք, ովքեր՝ վորպես բացառություն ուղարկել ենին ներկայացուցիչներ՝ — գանվեցին շատ անպատճառու ու պասսիվ և վոչինչ արժեքավոր նյութ չտվեցին մեղ:

Յերբ, Հայտնարկուալի ներկայացուցիչը ընկ. Զրադաշտանյանը խոսք խնդրեց՝ յես վախ հայտնեցի, վոր կիսուի և կզնա: Նա խոստացավ մնալ: Սակայն հենց վոր իր «խոսքն ասաց» գլխարկը վերցրեց և հեռացավ: Յեվ ի՞նչ ասաց: Շատ ճիշտ նկատեց ընկ. Ստամբուլյանը, վոր նա հանդես յեկավ անտեղի և անիմաստ վորոտընդուստ մի ճառով, հարձակվեց շրջգործկոմների և գյուղական ուղղությունների վրա, մեղադրեց ամենքին՝ թե ոս՝ այս ինչը չի արել, նա՝ այնինչը չի արել: Լավ կլիներ, վոր ընկ. Զրադաշտանյանն ինքն ասեր մեղ, թե իրենք ի՞նչ են արել տեղերում, որինակ՝ արտելների կազմակերպման և կազմակերպված արտելների ամբավանդան ուղղությամբ, ունեցե՞լ են նրանց նկատմամբ կենդանի, կոնկրետ զեկավարություն, ի՞նչ են արել անմիջական գործակցություն հաստատելու խորհրդակցին-մասսայական ողակների հետ, հետեւ

Են արդյոք, թե ի՞նչ են անում և ինչպե՞ս են աշխատում խորհուրդների տնտեսական, կոռապերատիվ սեկցիաները, դրե՞վ են այդ սեկցիաներում և ընդհանրապես խորհուրդներում իրենց զեկուցումները, ստեղծե՞լ են խորհրդադային-կոռապերատիվ հասարակայնություն Հայտնարկուալի աշխատանքների շուրջը, ներգրավե՞լ են իրենց աշխատանքներում բանվորական, կոլտնտեսական, աշխատավորական ակտիվը, տարե՞լ են կազմմասայական աշխատանքներ և այլն: Յեվ ընդհանրապես ի՞նչ ե արել Հայտնարկուալն ընդհանուր լեզու գտնելու խորհուրդների հետ և մասսաների ինքնագործունեցությունը ծավալելու ուղղությամբ:

Փոխանակ այս ամենին պատասխան տալու՝ նա ըստ յերկույթին հավատացած, վոր իր խոսքն ասել ե և կարեիք ել չկա մնալու և ուրիշների խոսքը լսելու՝ թողեց ու հեռացավ:

Կենտրոնական-հանրապետական որդանների ներկայացուցիչների բացակայությունը և ընկ. Զրադաշտանյանի յելույթը պարզ ցույց են տալիս, վոր կենտրոնում ակնհայտնի թերագնահատում են կազմմասայական աշխատանքների նշանակությունը խորհուրդների գծով:

Անցյալի փորձը և մեր խորհրդակցության արդյունքները հաստատում են դա:

Այս խնդրում՝ պատասխանատվության վորոշ բաժին ընկնաւմ ե նաև կենտրոնական կազմբաժնի վրա, վորի ուղարկության և գործունեության տեսաշրջանից հաճախ գուրս են մնում կենտրոնի հիմնարկությունների կազմմասայական աշխատանքների հարցը:

Այս կարևոր բացը պետք է արմատապես և արտգորեն վերացնել:

Թե զեկուցողները և թե՛ շրջանի ներկայացուցիչները չեն չափեցին, վոր տեղերում ես շատ հաճախ դիմազըրկվում են խորհուրդները, թերագնահատում խորհրդադային-կոռապերատիվ հասարական աշխատանքները:

Ընկ. Ստամբուլցյանն արգեն կանգ առավ այն ոպոր-
տունիստական «Թեորիաների» վրա, վորոնք մի ժամա-
նակ վորոշ «գրավչություն» և ժողովրդականություն
վայելում եյին:

Մեր կուսակցությունն արժանի հակահարվածը
տվեց «ձախ» քյալագյողական և աջ կարգի այդ տրա-
մադրություններին և այսոր վոչ վոք հրապարակով և
սկզբունքայնորեն չի պաշտպանում այդ «Թեորիաները»:

Սակայն ընկերներից վոմանք այստեղ հիշատակեցին
մի շարք փաստեր, թե ինչպես, շատ դեպքերում կոլ-
տնտեսությունների նախագահները միանձնյա իշխում
են, իսկ գյուղխորհուրդների նախագահները մնում
ստովերում: Յեվ կամ թե չե ընդհակառակը՝ գյուղխոր-
հուրդների նախագահները միանձնյա ձեռնամուխ լինում
կոլտնտեսությունների ուղերատիվ-արտադրական աշ-
խատանքներին:

Ի՞նչ են ասում ընկերների մատնանշած այս փաստե-
րը: Այս փաստերն ասում են՝ նախ այն, վոր մի շարք
վայրերում դեռ շարունակվում ե շփոթը խորհուրդների
և կոլտնտեսությունների փոխհարաբերությունների
խնդրում և յերկրորդ՝ խորհուրդների ու կոլտնտեսու-
թյունների գործունեության ասպարիզում շատ հաճախ
աշխատանքների վարչական մեթոդներն ամբողջապես
փոխարինում են մասսաների ինքնազործունությանը:

Ինչի՞ արդյունք ե այս ամենը:

Այս ամենը հիմնականում արդյունք է խորհուրդնե-
րի կազմ-մասսայական աշխատանքների թերապնահատ-
ման և այդ աշխատանքների թուլության:

Իսկ այդ թերապնահատման և թուլության մեջ զգա-
լի բաժին ունեն այն ընկերները, վորոնք հենց անմիջա-
կանորեն զեկավարում ու դիմավորում են խորհուրդնե-
րի կազմ-մասսայական աշխատանքները:

Յեթե այդ ընկերներն ունենային հստակ գիտակցու-
թյուն խորհուրդների կազմ-մասսայական աշխատանք-
ների արժեքի մասին, յեթե նրանք ժամանակին ուժին
թափով ծավալեյին այդ կազմ-մասսայական աշխա-

տանքները, յեթե կուս-խորհրդային աշխատանքների
ղեկավար ընկերները տեսնելին այդ գործունեության
ուեալ արդյունքները, գուք կարող եք հավատացած լի-
նել, վոր այսոր առիթ չեր լինի դանգատվելու, թե մեզ
աթոռ-սեղան չեն տալիս, գյուղերը դնալու համար ձի
չեն տալիս և այլն:

Կազմ-մասսայական աշխատանքների արդյունքից և
աշխատանքների վորակից ել ե կախված մեծ չափով այդ:

Կուսակցական-խորհրդային որգանները յեթե տես-
նեն ձեր աշխատանքների արդյունավետությունը, ձեր
կատարած ուեալ աշխատանքը, կարող եք վստահ լինել,
վոր դուք կունենաք և հարմար գրասենյակ, և սեղան-
աթոռ, թուղթ, թանաք, և փոխադրական միջոցներ:

Կազմ-մասսայական աշխատանքների միջոցով
խթանեք մասսաների ակտիվությունը, բանվորական,
կոլտնտեսական, աշխատավորական ակտիվը լայնորեն
ներգրավեցեք խորհուրդներում, ստեղծեցեք խորհրդա-
յին հարվածայիններից մարտիկներ, աշխուժացրեք,
ակտիվացրեք խորհուրդները, կյանքի կոչեցեք խոր-
հրդային ներքին, մասսայական ողակները և հենվելով
այդ մասսաների ինքնագործունեության, ենտուզիազմի
վրա ժամանակին և լիովին կատարեցեք ու դերակա-
տարեցեք կուսակցության-կառավարության քաղաքա-
կան-տնտեսական, մարտական առաջադրանքները:

Յերբ գուք այս ամենը կատարեք, —կարող եք վըս-
տահ լինել, վոր այլևս վերջ կտրվի խորհուրդների և
նրանց կազմ-մասսայական աշխատանքների թերապնա-
հատման և վոչ ընկ. Ամատունին առիթ կունենա զան-
գատվելու, վոր հրահանգիչը ձի չունի, վոչ ընկ. Այսի-
նչվը, վոր կազմբաժինը սեղան չունի և վոչ ել մյուս
ընկերներն այլ կարգի գանգատներ ներկայացնելու:

Այն, վոր կազմ-մասսայական աշխատանքները տե-
ղերում ևո թույլ են ընթանում՝ դրա ապացույցներն
այստեղ շատ տրվեց:

Մասսաների ներգրավումը խորհուրդների աշխա-

տանքներում, այդ մասսաների ինքնակործունեության ծավալը գեռնա չատ անբավարար է:

Վերջնենք որինակ՝ աշխատավոր կանանց ակտիվության և նրանց խորհրդային, սոցիալիստական շինարարության աշխատանքներին ներդրավելու կարևորագույն խնդիրը:

Ընկ. Արեգնազանը և Մարուսյան շատ իրավակիութեն կանգ առան այս ցավոտ խնդրի վրա: Զեղ, անկասակած, լավ և հայտնի, վոր ընկ: Լենինը Հոկտեմբերյան հեղափոխության մեծագույն նվաճումներից մեկն եր համարում աշխատավոր կնոջ սոցիալական, իրավական, քաղաքական ազատազրումը: Զեղ հայտնի յե, վոր նա բազմից շեշտել ե, վոր սոցիալիզմի կառուցման հաղթանակը պահանջում ե ազատազրկած աշխատավոր կանանց մասսայական ու ակտիվ մասնակցությունը խորհրդային, սոցիալիստական շինարարության ասպարդում: Լենինը՝ խորհրդային իշխանության պատմական արժանիքն եր համարում, վոր ամեն մի սպասուհի ընդունակ ե լինելու յերկիրը կառավարելու: Սակայն, թե ընկ. Արեգնազանը, թե՛ ընկ: Մարուսյան և թե՛ մի շարք այլ ընկերներ ընդգծեցին, վոր վերջին ժամանակները թուլացել ե աշխատանքը կանանց մեջ:

Ցավալի յե խոստովանել դա, բայց փաստ ե:

Բավական ե մատնանշել, վոր Խորհրդային Հայաստանում մենք ներկայիս չունենք և վոչ մի գյուղխորհրդի կին նախագահ, մինչդեռ անցյալներում մենք ունեյինք մի շարք գյուղխորհրդների կին նախագահներ, վորոնք մեծ յեռանդով և բարեխղճությամբ կատարում ենք իրենց պարտականությունները:

Պատք և անմիջապես և արագորեն մերջ տոմիլ այս անմիջիթար վիճակին, պետք ե ծավալի կանանց չարքում լայն կազմ-մասսայական աշխատանք, պետք ե տպահովել կանանց ակտիվ մասնակցությունը, մանուկների կոմոնիստական դաստիարակության, կոլտնտեսական շինարարության, կուլտ-կենցաղային կացու-

թյան բարելավման, խորհուրդների վերակառուցման և այլ հարակից աշխատանքներում:

Կազմ-մասսայական ծավալուն աշխատանքի ուղիներով մենք պետք ե իրականացնենք լենինյան քաղաքական պատգամը, վոր առանց մարդկության կեսի՝ կոնանց մասսայական-ակտիվ մասնակցության խորհրդային սոցիալիստական աշխատանքներում՝ հնարավոր չե սոցիալիզմի կառուցման հաղթանակը:

Կանանց ակտիվության նշանակությունը լավ են հասկանում մեր գասարկարգային թշնամիները, վորոնք հաճախ փորձեր են կատարում ողտագործել նրանց և լարել մեր դեմ: Բավական ե ձեզ հիշեցնել, վոր համատարածի ժամանակի կուլակա-գաղնակցական տարրերը վորոշ վայրերում աշխատեցին կազմակերպել կանանց, չոհագործել նրանց կուլտուր-կենցաղային հետամնացությունը և լարել նրանց գյուղի սոցիալիստական վերակառուցման դեմ:

Այնուհետև, ուր ժամանակին բացատրական, կազմ-մասսայական աշխատանք ե կատարվել՝ աշխատավոր կինը հանդես ե յեկել սոցիալիստական շինարարության ակտիվ մարտիկ: Իոկ այստեղ, ուր բացակայել ե մեր այդ աշխատանքը, իր սե գործն ե կատարում մեր դասկարգային թշնամին:

Քաղաքական այս փաստը պետք ե, ընկերներ, այսուհետեւ դրավի ձեր հատուկ ուշադրությունը՝ դուք հատկապես, շրջանային-դյուղական վայրերում աշխատողներդ, պետք ե ձեռնարկեք բոլոր միջոցները, վորպեսզի աշխատավոր կանանց լայն մասսաները ընդգրկվեն խորհուրդներում:

Յերկրորդ ցավոտ խնդիրը, մեր աշխատանքների հիմնական բացը, դա աղջային փոքրամասնությունների մեջ և սահմանամերձ շրջաններում կատարվող աշխատանքներն են: Այս հարցը մեզ համար ունի մեծագույն քաղաքական արժեք, առավել ևս Խորհրդային Հայաստանում, վոր սահմանակայից և Արևելյան

յերկրներին, վորոնք ուշի ուշով հետեւում են մեր պայտքարի ու շինարարության ընթացքին:

Մենք, հավատաբիմ մեր մեծ ուսուցչի՝ ընկ. Լենինի պատգամներին՝ վերջ ենք տվել ցարական-դաշնակցական կարգերի ու բարքերի մնացորդներին: Խորհրդային իշխանությունը հաստատվելու իսկ որվանից՝ մեր ստհմանների դուռը լայն ենք բացել Դաշնակցության «մաքրելու» ջարդաբար քաղաքականության բոլոր գոհերի առաջ, վորոնք մասսայաբար վերաբնակվել են իրենց հայրենի ողախներում, կամ այլ ապահով վայրերում: Մենք տվել ենք նյութական, կուլտուրական, քաղաքական և այլ բոլոր հնարավորությունները, վորապեսզի մեր յերկրի ազգային փոքրամասնությունները կարողանան ազատ և անկաշկանող զարգացնել իրենց կուլտուրան ձեռվ ազգային, բովանդակությամբ պրոխտարական: Յեթ այս ասպարիզում մենք ունենք խոշորագույն նվաճումներ: Բավական ե այստեղ՝ մատնանշել, վոր Խորհրդային Հայաստանում մշակվեց քյուրդ-յեղիզական այրութենը, մի ունիորմ, վոր ունի վոչ թե սոսկ տեղական, այլ միջազգային կուլտուրական-քաղաքական նշանակություն: Կամ թե չե՞ մենք ամենայն հաջողությամբ վերացրինք շրջաններում հին-արաբական այրութենը և փոխարինեցինք՝ նոր լատինականով վոր մեծ խթան հանդիսացավ թյուրք աշխատավորության կուլտուրական հեղափոխության վերելքին:

Այս ամենի շնորհիվ մեր յերկրում հաստատվեց ու ամրապնդվեց ազգային իտաղաղությունը, տարրեր ազգերի պատկանող աշխատավորների դասակարգային համերաշխությունը, յեղբայրական քաղաքական դաշնոքը:

Սակայն այս ամենին զուգընթաց մենք ունենք շատ իարենը բացեր ազգային փոքրամասնությունների շրջաններում կատարվող մեր աշխատանքներում:

Հատկապես ձեր ուշադրությունն եմ հրավիրում լեզվի և կադրերի խնդիրների վրա, վորոնց մասին խոսեցին նաև ընկերները:

20

Արդեն իսկ շեշտեցի, վոր լեզվի ասպարիզում՝ մենք ունենք խոշորագույն նվաճումներ, հատկապես կուլտ-կրթական և դատական աշխատանքների ասպարիզում ազգային փոքրամասնությունների վայրերում՝ դատավարությունը կատարվում է նրանց մայրենի լեզվով, ազգային փոքրամասնությունների դպրոցական-կրթական հիմնարկություններում դասավանդում՝ են նույնպես նրանց մայրենի լեզուներով, գյուղխորհուրդներներում ևս գործակարությունը, գրագրությունը տարգում և տեղի ազգային փոքրամասնության լեզվով և այլն:

Սակայն չնայած այդ ամենին՝ հատկապես կենտրոնական, հանրապետական հիմնարկությունները, ձեռնարկություններն իրենց շրջաբերականները, հրահանգները և այլ գրագրություններն ուղարկում են թուրքական, քուրդական և այլ վայրեր հայերեն կամ ուսւերեն, իսկ ոռուսական, հունական և այլ շրջաններ՝ հայերեն: Բավական ե այստեղ՝ մատնանշել, վոր նույնիսկ ՀԱՄԽ-ը շատ հաճախ իր գրությունները տեղերին ուղարկում ե հայերեն կամ ուսւերեն, վոր մեծ մասամբ անհասկանալի յե ազգային փոքրամասնությունների համար: Այս ասպարիզում անկասկած, մեծ նվաճում ե և մեծ գործ ե կատարում կենտգործկոմի թարգմանչական բյուրոն, վոր շատ կարենը աշխատանք ե տանում՝ իշխանության և հանրապետական վորոշումները, կարգադրությունները տեղերին մայրենի լեզվով հաղորդելու համար:

Բայց և այնպես այս ասպարիզում դեռևս ամեն ինչ բավարար չե և այս խնդրի վրա պետք ե հատուկ ուշադրություն դարձնեն թե կենտրոնում և թե տեղերում աշխատող ընկերները, հատկապես դուք, լավ հիշելով, վոր կազմ-մասսայական, բացատրական աշխատանքների հաջողության հիմնական պայմանն ե մայրենի լեզվի ծավալումը:

Այսուհետեւ առավել ևս պետք ե ակտիվ պայքար մղենք, վորպեսզի լիովին ապահովվի ազգային փոքրա-

21

մասնությունների լեզվի գործածությունը, առանց վորի չեն կարող հաջող ընթանալ և մեծ արդյունք տալ ձեր կազմ-մասսայական աշխատանքները:

Այսուհետև վորակես կարևորակույն խնդիր պետք է մեր հատուկ ուշադրության արժանանա ազգային փոքրամասնությունների կաղըբերի հարցը:

Այս ասսարիգում, անկասկած, մենք ունենք զգալի նվաճումներ՝ քաղաքներում թե գյուղերում արդեն իսկ ունենք բանվորական, կոլտնտեսական ակտիվ, վորին պետք է պատրաստել, վերսպատրաստել և կազմակերպել խորհրդային աշխատանքների, հատկապես գյուղ-խորհրդականների նախադահների պաշտոնի համար:

Վերջերս, անկասկած, այդ ուղղությամբ վորոշ քայլեր արել ենք՝ բավական և մատնանշել Յերևանում թուրքական շրջանային ակտիվի համար կազմակերպված գասընթացքները, վոր անցան հիմնականում հաջող:

Դարաքիլիսայում, մասնամբ և Բասարգեչարում, Աղբաբյում գյուղական խորհրդային ակտիվի վերապատրաստության ուղղությամբ կտտարվել են վորոշ աշխատանքներ: Սակայն այս ամենը դեռ շատ և անրավարար թե՛ քանակակես և թե՛ վորակապես: Թուրք փոքրամասնության կաղըբերի ընդգրկումը դեռ թույլ է, իսկ ոռւսների, քուրդ-յեզիդիների, ասորիների, հունականին դեռ չեմ խոսում: Կենտգործկոմի կաղըբերի բաժնի գեկուցումից դուք աեսաք, վոր առաջիկա, 1933 թ. պլանում մենք զգալի տեղ ենք հատկացրել ազգային փոքրամասնությունների պատրաստության և վերապատրաստության խնդրին: Մեր այդ ծրագրի հաջողության յերաշխիքը ձեր ակտիվության մեջ է, հատկապես այն ընկերներից վորոնք աշխատում են ազգային փոքրամասնությունների և սահմանամերձ ըրջաններում:

Անրավարար պետք է համարել խորհրդային, կազմ-մասսայական աշխատանքները չքավորության

շարքերում, ինչպես և մյուս աշխատավոր մենատընակենների մեջ: Կոլեկտիվացման հաջողությունները վորոշ չափով թմրացրել են շրջաններում աշխատող ընկերների ուշադրությունն այս ուղղությամբ: Ընկերներից շատերը հաշվի չեն առնում այն կարեռ հանգամանքը՝ վոր Խորհրդային Հայաստանում աշխատավոր գյուղացիության կեսից ավելի դեռևս կոլտնտեսությունների մեջ չեն ընդգրկված: Այդ աշխատավոր մենատեսները վաղվան կոլտնտեսականներն են հանդիսանալու, պետք է ծավալել ու խորացնել կազմ-մասսայական աշխատանքները նրանց մեջ, վորակեսի նրանք ավելի չուտ, պատրաստ, բարեխղճորեն մտնեն կոլեկտիվ տնտեսությունները:

Անկախ դրանից, այդ կազմ-մասսայական, քաղաքատիարակչական, բացատրական աշխատանքն անհրաժեշտ ե ծավալել նրանց մեջ, վորակեսի նրանք չընկենն կուլակ-դաշնակցական և այլ հակախորհրդացին ուժերի ազդեցության տակ, լիովին կատարեն կուսակցության և կառավարության բոլոր տնտեսական քաղաքական առաջադրանքները:

Կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպմամբ չի վերացվում անհրաժեշտությունը՝ չարունակել ակտիվ աշխատանքները կոլտնտեսականների շարքերում: Կոլեկտիվ տնտեսությունները, հատկապես իրենց զարգացման նախնական ետապներում, սոցիալապես միտատարը զանդվածներ չեն, դասակարգային պայքարը, մանր-բուրժուական սեփականատիրական հասկացողությունները և սովորությունները դեռ վորոշ ժամանակ զգալ են տալիս իրենց գոյությունը կոլտնտեսությունների մեջ: Այսպիսի պայմաններում հատկապես դուք, խորհրդային զծով պետք է յեռանդուն աշխատանք տանեք աշխատավոր մենատեսների մեջ, աշխատելով արագացնել նրանց գիտակից մուտքը կոլտնտեսություններում և սոցիալիստական վերադաստիբարակությունն ավելի ևս կոլտնտեսություններ մտնելուց հետո:

Այս ընդհանուր գնահատականներից հետո՝ կարևոր էմ համարում վորոշ դիտողություններ կատարել այն մի շաբթի խնդիրների շուրջը, վորոնք արծարծեցին հատկապես շրջաններից յեկող ընկերները:

Այդ խնդիրներն հետեւյալներն են.

Ընկերներից շատերը գանգատվում եյին, վոր թույլ չ յեղել կենտգործկոմի կազմբաժնի գործունեությունը, հատկապես նրա ղեկավարությունը, տեղերում դեռ չեն կազմակերպվել կազմբաժիններ, չունեն կանոնադրություն, հրահանգ և այլն:

Այս գանգատների մեջ անկասկած, ճշմարտություններ կան և այն ամեն ինչ վոր ասվել ե՝ կազմբաժնը հաշվի կառնի իր հետագա գործունեության ընթացքում։ Սակայն հաշվի պետք ե առնել, վոր մինչ վերջին ժամանակները գեռ լուծված չեր կազմբաժինների իրավական վիճակը, կազմակերպչական սիստեմը, աշխատանքի ձեռքը և այլն։ Այսպիսի պայմաններում, համենայն դեպս, մեր կազմբաժնը կատարել ե զգալի աշխատանք, հատկապես վերջին տարում։ Կազմբաժինն ունի իր կանոնադրությունը, ձեակերպվել ե կոմպլեկտավորվել են հիմնական սեկտորները, հաստատվել են հաստիքային և արտահաստիքային հրահանգիչների կանոնադրությունները, նախաձեռնվել են նաև տեղական կազմբաժինների հրահանգման կազմակերպման աշխատանքները և այլն։ Զնայած այս նվաճումներին՝ բայց և այնպես կազմբաժնի գործունեությունը պետք ե ավելի աշխատացնել, ծավալիլ։ Սակայն այստեղ պետք ե շեշտեմ մի կարևոր և սխալ դիրքավորում, վոր նկատվում ե շրջանից յեկած բոլոր ընկերների յելույթներում։ տեղերի աշխատանքների բացի պատասխանատվությունը բարդել կենտրոնի վրա։ Այսպիսի վերաբերմունք ցույց տվեց, որինակ ընկ. Ամատումին։ Լենքաղիսորհուրդը՝ մինչ որս չի կազմակերպել կազմերի վերապատրաստման դասընթացքները, չնայած կաղըների բարենի բազմաթիվ հիշեցումներին, վոր-

պեսզի արագացնեն այն։ Ընկ. Ամատումին, փոխանակ խոստովանելու ակնհայտ անգործունեությունը, մեղքը ձգում ե կադրերի բաժնի վրա, պատճառաբանելով, վոր կենտրոնից չեն ուղարկել հազար թե յերկու հազար ոուրի, թեև այդ 2000 ոուրին վաղուց նրանց ուղարկված ե։ Յեվ նման պատճառաբանություն մեջ ե բերում Լենքաղիսորհուրդի կողմից, վորն ունի միլիոնների բյուջե և ունի բոլոր հնարավորությունները հատկացնելու դասընթացքների համար այդ չնչին գումարը։

Կազմ-մասսայական աշխատանքների հաջողության հիմքը՝ դա տեղի ընկերների նախաձեռնությունը, ինքնագործունեությունն ե հանդիսանում, նրանք են, վոր պետք ե խթանեն, կազմակերպեն ու գլխավորեն մասսաների ինքնագործունեությունը, իսկ յեթե այդ ինքնագործունեությունը հայտնաբերվի, այդ դեպքում կարիք չի զգացվի այն գանգատների, վորոնք այստեղ լսվեցին։

Այդ ինքնագործունեության, նախաձեռնության անբավարար լինելով պետք ե բացատրել նաև այդ կարգի գանգատները, վոր այստեղ լսվեցին, ինչպես որինակ՝ գյուղիսորհուրդի նախազահների ապահովության խնդիրը։ Ընկերներն իրավացիորեն նկատում են, վոր շատ վայրերում գյուղիսորհուրդների նախազահների նյութական վիճակն անմխիթար ե, վոր կոլտնտեսություններն ողնության չեն գալիս, ուստի և հարց են հարուցում, վորպեսզի պետական-կենտրոնացած մթերման կարգով ապահովվեն նրանք և կամ թե չեն հրահանգվի կոլտնտեսություններին դա անելու։

Կենտգործկոմի նախազահությունն արդեն իսկ այդ ուղղությամբ վորոշում ունի, վորպեսզի կոլտնտեսությունները բավարարեն այն գյուղիսորհուրդի նախազահ կոլտնտեսականներին, վորոնց ընտանիքի աշխատունակ անդամները բարեխղճորեն կատարում են իրենց պարտականությունները։

Ընկերները գանգատվում են, վոր այդ վորոշումը չի կենսագործվում տեղերում։

Մենք, կոլտնտիենտրոնի գծով և անմիջապես համապատասխան կարդալը յուններ կատարել ենք և յեթե այս ամենից հետո շատ տեղերում՝ այդ վորոշումը չեն կատարում, այստեղ ևս մեղքի մեծ չափը պետք է բարովել տեղերի վրա։ Յեթե դուք արժանի չափով մասսայական-բացատրական աշխատանք տանեք և դյուզ-խորհուրդների նախագահները վայելեն ժողովրդականությունն, լինեն ակտիվ ոժանդակողներ կոլտնտեսության կազմակերպչական-տնտեսական ամրապնդման, այդ գեղքում կարելի յե վստահել, վոր կոլտնտեսություններն ուրախությամբ կրավարարեն գյուղխորդուրդների նման նախագահներին։ Իսկ վոր տեղական ինքնագործունեությունն այս ասպարիզում շատ բան կարող ե անել, ապացույց իջևանի, Աշտարակի արջանների որինակները, վորտեղ կոլտնտեսություններն ապահովել են հացով և այլ պարենով գյուղխորհուրդների նախագահներին։

Կազմ-մասսայական աշխատանքների ասպարիզում մեծ և մամուլի գերը, հատկապես գյուղխորհուրդների աշխատանքների մասսայականացման և մասսաների ինքնագործունեության ծավալման ուղղությամբ։ Այստեղ, համարյա, բոլոր ընկերները խիստ հարձակվեցին թե՛ կենտրոնի և թե՛ տեղական մամուլի որդանների վրա, մեղադրելով, վոր նրանք թերագնահատում են խորհուրդների գեցը, նրանց աշխատանքները։ Ճիշտ ե, խորհուրդների կազմ-մասսայական աշխատանքների վորոշ թերագնահատում նկատվում ե և խորհուրդների աշխատանքներն արժանի չափով չեն լուսաբանվում։ Սակայն այս ասպարիզում ևս հանցանք ունեն կենտրոնի թե տեղական խորհրդային աշխատակիցները, վորոնք ժամանակին, լուրջ, հիմնավորված նյութեր չեն տալիս մամուլին։ Դուք ոգնության համեմ մամուլին, հաստատեցեք նրա որդանների հետ սերտ, կենդանի կապ, շահագրգուեցեք նրանց ձեր աշխատանքներով— և յեթե այս ամենն անեք՝ կարող եք վստահ լինել, վոր

մամուլն անհամեմատ ավելի կընդառաջի ձեր աշխատանքներին, քանի թե մինչ այժմս ե յեղել։

Ընկերները կանգ առան նաև ինֆորմացիայի վիճակի վրա։ Յեվ միանդամայն իրավացիորեն, քանի վոր խորհուրդների գործունեության և հատկապես կազմ-մասսայական աշխատանքների ասպարիզում ինֆորմացիան ունի կարևոր արժեք, նա մեղ անհրաժեշտ է ուժի և ջրի չափով։ Ինֆորմացիայի միջոցով ե, վոր ապահովելու յե մասսաների կապը խորհրդային որդանների հետ, խորհրդային որդանների փոխադարձ շաղկապը, կենտրոնի և տեղերի կապը։ Ինֆորմացիան միաժամանակ ուժեղ զենք ու միջոց ե հանդիսանալու՝ ահազանգելու կատարվող սխաներն ու հանցանքները և շտկելու գրանք։ Դժբախտաբար թե կենտրոնում և թե տեղերում ինֆորմացիայի գործը միանդամայն անբավարար ե։ Զեր վրա պարտականություն և դրվում առանձին ուշագրություն գարձնել բավորակ, արագատեմպ և սխանմատիկ ինֆորմացիայի վրա։ Թե գործնական-կազմակերպչական ի՞նչ միջոցներ և ձեեր պետք ե ոգտագործել աշխաժացնելու և վերակառուցելու ինֆորմացիայի գործը—դրա պատասխանը կդանեք առաջարկված բանաձեռում։

Համենայն գեպս, պետք ե վճռականորեն վերջ տաչ ներկա վիճակին։ *

Այստեղ խոսողներից շատերը գանգատվում ենին, վոր հաճախակի մորիլիգացիաները նրանց զրկում են հնարավորությունից ամբողջապես նվիրվելու կազմ-մասսայական աշխատանքներին։

Յեթե կուսակցությունը և կառավարությունը անհրաժեշտ են համարում այդ մորիլիգացիաները՝ մեր ընկերները ևս պետք ե յենթարկվեն ու բարեխողձորեն կատարեն իրենց պարտականությունները։ Հրահանգիչները մորիլիգացիայի յենթարկելով վոչ թե կտրվում են իրենց աշխատանքներից, այլ ընդհակառակն ստանում են նոր հնարավորություն և առիթ շարունակելու այլ

աշխատանքները: Ամեն մի մորիլիզացիա՝ կարելի յէ լավագույն կերպով ողտադործել կազմ-մասսայական, բացատրական աշխատանքների ուղղությամբ: Յեթե ձեզ մորիլիզացիայի կարգով գյուղ են ուղարկում՝ դուք կազմակերպեցեք, վերակառուցեք, գլխավորեցեք զյուղ-խորհուրդների աշխատանքները, կենդանացրեք խորհրդադային-հասարակական ողակները, ստեղծեցեք խորհրդադային, կոլտնտեսական ակտիվ և այլն: Յեթե դուք տյդպես վարվեք՝ մորիլիզացիայի չնորհիվ վոչ թե դուք կփորվեք ձեր անմիջական աշխատանքներից, այլ ընդհակառակն այդ մորիլիզացիաները ձեզ կտան այդ աշխատանքների նոր հնարավորություններ:

Այստեղ շատ խոսվեց թե կազմ-մասսայական աշխատանքների ասպարիզում՝ կազմակերպչական վո՞ր ձեւերն են նախընտրելի՝ սեկցիան, բրիգադան, թե՞ այլ ձեւեր: Աշխատանքների այդ սիստեմների և ձեւերի մասին դուք մանրամասն ցուցումներ կդտնեք մեր բանաձեւում, յուրաքանչյուրն այդ սիստեմներից ունի իր առանձնահատկությունն ու առավելությունները: Դուք յուրացրեք և ողտագործեցեք այդ բոլոր ձեւերն ու հնարավորությունները, սակայն միշտ ինկատի ունեցեք ձեր աշխատանքների թափը, բովանդակությունը:

Իրավացիորեն ընկերներից վամանք նկատեցին, վոր մեր կուսակցության պայքարի և աշխատանքի կազմակերպչական ձեւերը, փորձը պետք է ուսանելի լինի և ընդորինակվի նաև խորհրդային գծով և խորհուրդներում: Կուսակցության հարուստ պրակտիկան, անկասկած, պետք է լայնորեն ողտագործվի ձեր ապագա վողջ գործունեյության ընթացքում:

Ընկերները շատ դեպքեր բերին վարչարությունների, հեղափոխական որինականության ակնհայտ խախտումների, գեկուցման և այլ խոսողների մեջ բերած որինակների վրա մենք ևս կավելացնելինք այլ բազմաթիվ որինակներ:

Այդ վարչարարությունների և որինազանցությունների դեմ պետք է անողոքաբար պայքարեն մեր խորհրդը: Պային սրգանները, վորոնց թվում գատարանն ու ղատախազությունը: Սակայն մենք պետք ենախ կանխենք այդ վարչարարությունները և ապա հայտնաբերենք ու հետապնդենք: Իսկ դա մենք չենք կարող անել առանց մասսաների ինքնագործունեության, բանվորների, կոլտնահետականների, աշխատավորների լայն ընդդրկման խորհուրդների աշխատանքներում:

Կազմ-մասսայական աշխատանքների հենց անմիջական նպատակն ե ապահովել մասսաների մասնակցությունը խորհուրդներում, մասսաների քաղաքական զգության բարձրացումը, աշխատավորների ակտիվության գլխավորումը:

Յերբ դուք կատարեք ձեր այդ հիմնական քաղաքական պարտականությունը, յեթե վոչ խոպառ կվերանան, այդ դեպքում գեթ հիմնականում կթուլանան վարչարարության-ապօրինությունների այն բազմաթիվ, մասսայական յերեսությները, վորոնց մասին խոսեցին ընկերները, հատկապես զեկուցող ընկ: Գալիքյանը:

Մասսաները և մասսաների ինքնագործունեությունն ե այդ ամենի գեմ հաջողությամբ պայքարելու գենքը:

Անդրադառնալով հատկապես մեր պաշտոնական որդանին «Խորհրդային Շինարարության» պետք ե ասեմ, վոր մեր թերթը խոչը անելիք ունի կազմ-մասսայական աշխատանքների, կենտրոնի ու տեղերի շաղկապի ամբազնդման, խորհրդային շինարարության սկզբունքների մասսայականացման ուղղությամբ: Սակայն «Խորհրդային Շինարարությունը» իր այդ կոչումը կարդարացնի այն դեպքում միայն, յեթե դուք ևս տեղերում կենդանի, ակտիվ աշխատող ընկերները, ընդառնջեք, սիստեմատիկ կապ հաստատեք թերթի խմբագրության հետ, ուղարկեք համապատասխան նպատմեր և այլն:

Մենք անցյալներում հրատարակում ենք նույնանուն մի թերթ, վոր մեծ դեր կատարեց կազմ-մասսայական աշխատանքների աստղաբիզում՝ և ահազին ժողովրդականություն եր վայելում գյուղական ակտիվի, գյուղականություն երի աջըում:

«Խորչը դային Շինարարություն»՝ ը ներկայիս ամսաթերթ է: Գետք ե աշխատենք, վորպեսզի նա լույս տեսնի ամիսը յերկու անգամ: Իսկ դա միայն կենտրոնի ուժերով չի կարող կատարվել: Գետք ե բոլորս համախմբենք մեր թերթի շուրջը. գուք չըջաններում կազմակերպեցեք ակտիվ թղթակիցների կաղըեր, վորպեսզի նրանք մեզ ժամանակին և բարեխղճորեն իրազեկ պահեն հատկապես գյուղական աշխատանքների մասին:

Վերջացնելով խոսք՝ յեռ ձեր հատուկ ուշադրությունն եմ հրավիրում կրկին և կրկին մեր կաղըերի պատրաստման ու վերապատրաստության խնդրի վեա: Կենտրոնի կաղըերի բաժնի զեկուցումից դուք տեսաք, վոր մենք այդ խնդրին տալիս ենք մեծ արժեք և առաջիկայում ավելի ևս ծավալելու յենք մեր աշխատանքները, ավելացնելու յենք պատրաստվողների քառակը և բարձրացնելու վորակը: Սակայն դուք, կաղմասսայական աշխատանքների ակտիվիտեներդ, բարվականանալու չեք սոսկ դասընթացքներով, թե կաղըերի հետագա դաստիարակությամբ պետք ե զբաղվեք և թե միաժամանակ ձեր ընդհանուր գարզացմամբ, քաղաքական դաստիարակությամբ: Մեղ հարկավոր են՝ մարքս-լենինյան տեսությունը խոշոր նյութ տվեց թե կենտրոնի և թե տեղերի աշխատողներին՝ վերացնելու բացերը և աշխատմացնելու, վերակառոցելու խորհուրդների կազմմատսայական աշխատանքները:

Եռ հավատացած եմ, վոր օրանից հետո դուք, տեղերը վերադառնալով ավելի դուեպեղված կլինեք և կուժեղացնեք ձեր աշխատանքները՝ սոցիալիզմի կառուցման մարտական դիրքերում:

«Վապտ Սովետով» և այլն: Այն ընկերները, վորոնք ոռքակերեն չգիտեն, պետք ե կազմակերպին խմբակային ընթերցանություն, պետք ե ոգտագործեք համապատասխան հեռակա դասընթացքներ, հետեւք գրականության և այլն: Մենք ևս մեր հերթին, այսուհետև կաշխատենք պատանձին ուշադրություն գարձնել հրատարակչության գործի վրա, լույս ընծայելով թարգմանական թե ինքնուրույն գրականություն:

Սակայն առիթն և այստեղ՝ հիշեցնելու, վոր հաճախ մեր շրջգործկոմներն այս խնդրում այն աստիճանի անտարբեր են, վոր՝ նույնիսկ մեր ուղարկած գրականությունը կամ չեն ստանում ու հետ են դարձնում, և կամ թե չեն ստանալուց հետո յել չեն ուղարկում տեղի:

Յես հավատացած եմ, վոր կուսակցության քաղաքական առաջադրանքը՝ վերապինվել մարքս-լենինյան թեորիայի գենքով՝ դուք անշեղորեն կատարեք և իրոք արժանի և ընդունակ կլինեք կատարելու սոցիալիստական շննարարության ներկա ետապի պահանջները:

Ընկերներ.

Հանրապետական կազմ-մասսայական այս խորհըրդակցությունը խոշոր նյութ տվեց թե կենտրոնի և թե տեղերի աշխատողներին՝ վերացնելու բացերը և աշխատմացնելու, վերակառոցելու խորհուրդների կազմմատսայական աշխատանքները:

Յես հավատացած եմ, վոր օրանից հետո դուք, տեղերը վերադառնալով ավելի դուեպեղված կլինեք և կուժեղացնեք ձեր աշխատանքները՝ սոցիալիզմի կառուցման մարտական դիրքերում:

Յես հույս ունեմ, վոր այսուհետեւ դուք՝ ելավելի կուժեղացնեք անմիջական-կենդանի թե գրավոր կապը մեզ հետ, թերթի միջոցով, անհատական նամակներով թե այլ ձեերով բացառություն և ոգնություն ստանով մեզանից: Մեր կողմից խոստանում ենք պատասխանել ձեր բոլոր հարցումներին և դիմումներին՝ վորպեսզի պատվով դուքս գաք ձեզ վերապահված աշխատանքներից:

Յանկանում եմ ձեզ հաջողություն:

Թույլ տվեք հանրապետական կազմ-մասսայական
խորհրդակցությունը հայտարարել փակված:

ՀԵՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒ- ԹՅԱՆ ԲԱՆԱԳԵՎԵՐԸ

I

Ա.

Խորիուրդների կազմ-մասսայական աշխատանքների հիմնական խնդիրները

Հանրապետական կազմ-մասսայական խորհրդակցությունն արձանագրում է, վոր խորհրդային դեմոկրատիզմի և խորհրդակցությունի կազմ-մասսայական աշխատանքների կենսագործման ասպարիֆում ձեռք են բերված զգալի նվաճումներ:

Այդ նվաճումները հիմնականում արտահայտվում են հետեւյալում՝

1. Քաղխորհուրդների գծով՝ Յերեանում և Լենինականում վերակառուցվել են աշխատանքները, ղեկավար սկզբունք ունենալով կուսակցության ու կառավարության առաջադրանքները՝ խորհուրդներն յերեսով ղեպի արտադրություն, քաղաքային տնտեսությունների սոցիալիստական վերակառուցումը, բանվորների և աշխատավորների կուլտ-կենցաղային կարիքների սպասարկման ծավալումը, սեկցիաների և պատգամավորական խմբակների աշխատացումն ու ակտիվացումը, աշխատանքի սոցիալիստական ձեռքի կենսագործումը և այլն:

2. Կազմակերպվել ե Արթիկի ավանային խորհուրդը ու վերակառուցվել են Ալլահվերդու և Ղափանի աշխանային խորհրդակցությունները, իսկ արդյունաբերական ձեռնարկություններում կազմակերպվել են պատգամավորական խմբակներ:

3. Գալասաների լուծարքմամբ ավելի ևս հնարավոր եղարձել չըջանի կողմից գյուղի նկատմամբ կոնկրետ, ոպերատիվ ու դիֆերենցիալ ղեկավարությունը:

4. Մեքենա-տրակտորային կայանների կազմակերպությամբ՝ ծավալվում-խորանում եւ առաջավոր անինիայի ու գիտության ներթափանցումը գյուղի և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բոլոր բնագավառներում:

5. Ընդլայնվել են գյուղխորհուրդների իրավական-կազմակերպչական հնարավորությունները, ստեղծվել են նրանց համար Փին-բյուջետային ինքնուրույն բազա և այլն:

6. Լենինյան ազգային քաղաքականության անշեղ կենսագործման հիմունքներով՝ վերակառուցվել և ավելի ամբաղնդվել են խորհուրդները նաև ազգային փոքրամասնությունների շրջաններում և այլն:

7. Շնորհիվ աշխատավորական լայն մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացման, Հասարակական-կենցաղային վիճակի բարելավման, դասակարգային-քաղաքանական գիտակցության դարձացման ծավալիւր-ընդդարձակվել եւ խորհրդային աշխատավորական ակտիվի կազմը:

8. Այս ամենի չնորհիվ՝ որինազանցության և վարչարարության յերեսույթներն ավելի յեն հայտնաբերվում, մերկացվում և հետապնդվում, միաժամանակ ծավալվում, խորանում են կուս-խորհրդային դիբեկտիվների կենսագործման կազմ-մասսայական ձևերը, բացատրական-գաստիարակչական մեթոդները:

9. Այսպիսով խորհրդային դեմոկրատիզմը և մասսայական աշխատանքները ստանում են ավելի բարձր վորակ, ստեղծելով մասսաների ինքնազործունեության, աշխատանքի ու պայքարի ավելի մեծ հնարավորություններ, շաղկապելով մասսաները խորհուրդներին և

դրանով իսկ ամրապնդելով պրոլետարական դիկտատուրայի որդանները:

Կազմ-մասսայական հանրապետական խորհրդակցությունը՝ նշելով հանդերձ վերոհիշյալ խոշոր նվաճումները՝ միաժամանակ արձանագրում եւ հետեւյալ հիմնական բացերը —

10. Սոցիալիստական շնարարության բայլշեիկյան ներկա տեմպերի համեմատությամբ գեռևս անրավարար են կազմ-մասսայական աշխատանքները՝ խորհրդային-հասարակական ողակներում:

11. Խորհուրդները, ինչպես և հասարակական կազմակերպությունները և տնտեսական ձեռնարկություններն արժանի չափով ու թափով չեն կիրառում կազմ-մասսայական գծով աշխատանքի սոցիալիստական ձևերն ու մեթոդները:

12. Խորհրդային հիմնարկությունների, հասարակական կազմակերպությունների և տնտեսական ձեռնարկությունների գործունեության ընթացքում դեռ հաճախ են պատահում վարչարարության, բյուրոկրատիզմի և որինազանցությունների յերեսույթները:

13. Շատ դեպքերում բացակայում է խորհրդային մասսայական աշխատանքների գալակարգային զգոնությունը և հոտառությունը, հակախորհրդային իդեոլոգիան ու դիբեկտուրանը թափանցում են մեր թույլ ողակները և հաճախ անտեսվում եւ ու թերազնահատվում դասակարգային թշնամու դիմադրությունը:

14. Քաղիտորհուրդները, հակառակ Համկոմկուսի 1932 թ. հունիսան պլենումի վորոշումների արժանի չափով չեն վերակառուցել իրենց աշխատանքները, չեն վերցրել բայլշեիկյան մարտական տեմպեր, չեն ապահովել քաղաքային տնտեսությունների սոցիալիստական վերակառուցման անհրաժեշտ թափն ու վորակը, թերակատարում են բանվոր-աշխատավորների մատակարգման և կուլտ-կենցաղային կարիքների ոպասարկումը, արժանի չափով չեն բարելավել հացի և այլ մթերքների

վորակը, չեն կանոնավորել խորհրդային-կոլտնտեսական առևտութիւնթագքը, շուկաների վիճակը և այլն:

15. Անբավարար են աշխատանքները սեկցիաներում և պատգամավորական խմբակներում, աշխատավորական ակտիվը գեռն թույլ է ընդդրկված այդ սեկցիաների աշխատանքներում, ուժեղ չեն քաղխորհուրդների նախագահության և բաժինների կապը սեկցիաների և պատգամավորական խմբակների հետ, չեն ձևավորվել պատգամավորական խմբակների հարաբերությունները ձևնարկությունների յեռանկյունու հետ, չեն գործադրվում սոցիալիստական համատեղության պաշտոնավարություն ու հերթապահություն և այլն:

16. Ավանային խորհուրդները թեև իրավապետկազմակերպութեն ձևակերպվել են, սակայն թույլ են աշխատում, չեն սաեղծել ղեկավար ապարատ, չունեն կայուն ֆինանսական բազա, բյուջե և այլն:

17. Շրջգործկոմները շատ դեպքերում թերագնահատում են կազմ-մասսայական աշխատանքները, արժանի չափով չեն վերակառուցել իրենց գործառնությունների սիստեմը, թերագնահատում են սեկցիաների դերը, կենդանի, անմիջականորեն, ոպերատիվ չեն դեկավարում գյուղխորհուրդների աշխատանքները, բացակայում ե ղեկավարությունը և ստանդարտությունը ՄՏԿ կայանների ու կոլտնտեսությունների նկատմամբ և այլն:

18. Անբավարար է դյուղխորհուրդների դրությունը նաև գյուղատնտեսության սոցիալիստական վեշակուուցման ներկա պահանջների տեսակետից, ըստ վորում թույլ են աշխատում սեկցիաները, խորհուրդներին հաճախ փոխարինում են դյուղխորհուրդների միանձնյան նախագահները, փորոնք շատ դեպքերում վարչական կարգով են նշանակվում, փոխադրվում ու հեռացվում և այլն:

19. Թույլ է խորհուրդների կենդանի կապը և անմիջական ստանդարտությունը ՄՏԿ և կոլտնտեսական միավորների նկատմամբ:

36

20. Արժունի չափով չեն ողտագործվում և կենսագործվում խորհրդային սահմանադրության տված հնարավորություններն ու խորհրդային դեմոկրատիզմի արհանջները՝ խորհուրդների պլենումներն յերբեմն դիմապրկվում են, թուլանում և շատ սակավ հրամիքրվում, պատգամավորները հաճախ հաշվետու-պատասխանառու չեն դգում ընտրողների առաջ, պատգամավորների հետ կանչման իրավունքը քիչ ե կիրառվում և այլն:

21. Միանգամայն թույլ ե կանանց ընդդրկումը խորհուրդներում և խորհրդային որգաններում և ընդհանուրապես թույլ ե աշխատանքը կանանց շարքերում, ինչպես և ազգային փոքրամասնությունների, չքավորների մեջ և այլն:

II

Խորհուրդների կազմ-մասսայական աշխատանքների հասուն բնագավառները

Յելնելով վերոհիշյալից և նպատակ ունենալով հաղթահարել այդ բացերն և վերակառուցել խորհուրդների կազմ-մասսայական աշխատանքները, հանրապետական խորհրդակցությունը կազմ-մասսայական աշխատանքների առանձին բնագավառներում նշում ե՝

Բ.

Կենտգործկոմի կազմբաժնի գծով

Հայկենտգործկոմի կազմբաժինը վերջին յերկու տարվա ընթացքում ձեռք է բերել շոշափելի նվաճումներ, այն ե՝

1. Շրջանների ոպերատիվ ղեկավարության համար տոեղծվել ե տպարատ՝ ճյուղային սեկտորներով:

2. Կազմակերպվել են քաղաքական-տնտեսական նշանակություն ունեցող ստուգատեսներ (գյուղխորհուրդների, անոելս ճանապարհների, խորհրդային խմբակների, մի շարք շրջանների) և այլն:

37

Այս նվաճումները նշելով հանդերձ՝ լսորդակցությունը միաժամանակ արձանագրում է հետեւյալ բացերը:

3. Շրջանների մեծ մասի հետ կենդանի-ոպերատիվ կապը բացակայում է և ընդհանրապես շրջանների նկատմամբ զեկավարությունը թույլ է:

4. Անբավարար են աշխատանքները՝ կազմկոլեգիաների և կազմիորհրդակցության գծով:

5. Արտաշտատային հրահանդիչների կազմը դեռ բոլորովին չի կոմպլեկտավորված, իսկ յեղած հրահանդիչներն ել չեն ոգտագործվում լրիվ:

6. Զի կարգավորված ինֆորմացիայի գործը, միանդամայն թույլ ե վորոշումների կատարման փաստական ստուգումը, և այլն:

Վերոհիշյալ և այլ հարակից բացերը վերացնելու և կենտղործկոմի կազմը աշխատանքներն աշխատացնելու համար խորհրդակցությունն անհրաժեշտ եղանում հետեւյալ ձեռնարկումները՝

7. Պարբերաբար հրավիրել կազմ-խորհրդակցություններ, լսելով այդ խորհրդակցություններին պետական հիմնարկությունների, հասարակական կազմակերպությունների և տնտեսական ձեռնարկությունների կենտրոնական ու տեղական մարմինների, ճյուղերի, բաժինների, սեկցիաների և այլ զեկուցումները:

8. Կազմ-մասսայական աշխատանքների ասպարիզում ընդգրկել և ղեկավարել նաև հանրապետական կենտրոնական մարմինների ծրագրները, գործառնությունները, ձեռնարկումներն և ընդհանրապես այս գծով կատարվելիք կազմ-մասսայական աշխատանքները:

9. Հատուկ ուշադրություն դարձնել սահմանամերձ վայրերի, դյուղիորհուրդների աշխատանքների վերակառուցման վրա և այս նպատակով կազմբաժնին կից հրամիրել հատուկ խորհրդակցություններ:

10. Ուժեղացնել կազմբաժնի կապն ու զեկավարությունը կենտղործկոմին առ ընթեր աղջային փոքրամաս-

նությունների կենտրոնական հանձնաժողովի ու թարգմանչական բյուրոյի նկատմամբ:

11. Առավելագույն չափով ոգտագործել կենտղործկոմի անդամներին կազմ-մասսայական աշխատանքների գծով և հատկապես վորապես արտաշտատային հրահանդիչներ:

12. Ուժեղացնել կազմ-կոլեգիայի աշխատանքները, տալով այդ աշխատանքներին մնայուն, պարբերական և սիստեմատիկ բնույթ, քննարկելով կազմ-կոլեգիայում հանրապետական որդանների համապատասխան ձեռնարկումներն ու ծրագրները, այլև ընդհանրապես բոլոր առանձին կարևորությունների հերթայացնող հարցերը:

13. Կազմ-մասսայական և այլ ամեն կարգի ստուգում-հետազոտությունների ժամանակ հիմք ընդունել այդ աշխատանքների կատարման բրիգադային սիստեմը, ըստ վորում կենտրոնից ուղարկված բրիգադաներում ընդգրկել նաև մերձակա շրջանների տեղական ակտիվիտեներին:

14. Ինչպես կազմբաժնի գծով, նույնպես և համապատասխան վերաբան որդանների կողմից կատարված ստուգում-հետազոտությունների արդյունքները և այդ առթիվ կայացած վորոշումներն անհապաղ հասցնել համապատասխան տեղերին ու շահագրգոված մարմիններին:

15. Մշակել ու հրապարակել քաղխորհուրդների և շրջգործկոմների կազմբաժնների, ինչպես և արտաշտատային հրահանդիչների կանոնադրությունները, այլև և վերահրատարակել տեղական խորհուրդների կանոնադրությունը.

16. Ապահովել կայացված վորոշումների և արված կարգադրությունների փաստական կատարման ստուգումը, սահմանելով կատարման համար պատշաճ ժամկետներ, յենթարկելով թերացողներին պատասխանավության և այլն:

Ժողկոմատների և այլ հանրապետական հիմնարկ-
աների կազմակերպությունների գծով.

Կենտրոնական Հիմնարկ-ձեռնարկ-կազմակերպու-
թյուններից վոմանք թերագնահատում են կազմ-մաս-
սայական աշխատանքների նշանակությունը և իրենց
գործունեության յելակետ ունեն աշխատանքների կա-
տարման սոսկ վարչական-ապարատային սիստեմը:
Այս խոշոր թերությունը վերացնելու համար առա-
ջարկվում է՝ —

1. Հրավիրել հանրապետական-Հիմնարկ-ձեռնարկ-
կազմակերպությունների ուշադրությունը կազմ-մաս-
սայական աշխատանքների և ձեռնարկումների թերա-
գնահատման վրա:

2. Հանձնաբարել նրանց՝ իրենց իրավասության
գծով աշխատող խորհրդային բաժինների, սեկտորների
համար մշակել հատուկ կանոններ և գործունեության
ուղերատիվ պլան՝ աշխատանքների կազմ-մասսայական
մեթոդի կիրառման տեսանկյունով և սահմանել այդ
կանոնների կենսագործման պլաններ ու ժամկետներ և
պարբերական ստուգումներ:

3. Ժողկոմատների և հանրապետական Հիմնարկ-
ձեռնարկ-կազմակերպությունների հրահանգչական-
հետազոտական աշխատանքները վերակառուցել հետե-
յալ Հիմունքներով՝ —

ա) քաղաքային և շրջանային ապարատների ստու-
գումները կատարելիս գտնել անհրաժեշտ խորհուրդնե-
րի համապատասխան սեկցիաների մասնակցությունը.

բ) հրահանգչական ոգնություն ցույց տալ այդ սեկ-
ցիաներին. Հատուկ ձեռնհաս հրահանգիչներ ուղարկե-
լով՝ տեղերում սեկցիաների, պատգամավորական խըմ-
բակների և այլ մասսայական-հասարակական ողակների
աշխատանքները վերակառուցելու և դեկավարելու հա-
մար.

դ) ուսումնասիրել և հաշվառել լավագույն ուեկցիա-
ներն ու այլ մասսայական որդանների աշխատանքի գործա-
կան փորձը՝ այլ սեկցիաներին փոխանցելու համար.

դ) ժողկոմատների և այլ հանրապետական հիմ-
նարկ-ձեռնարկ-կազմակերպությունների կազմ-մասսա-
յական աշխատանքները ծավալելու նպատակով անհրա-
ժեշտ համարել սեկցիաների և այլ մասսայական կազ-
մակերպությունների ընդանային, քաղաքային և հան-
րապետական խորհրդակցություններ, հավաքներ, կոն-
ֆերանսներ:

4. Քննարկել սեկցիաների և պատգամավորական
խմբակների գեկուցումները ժողկոմատների կողեգիա-
ներում և այլ հիմնարկ-ձեռնարկությունների նախա-
գահության նիստերում:

5. Վերոհիշյալ հիմնարկ-ձեռնարկ-կազմակերպու-
թյունների հանրապետական համագումարներին, կոն-
ֆերանսներին, նիստերին մասնակցից դարձնել համա-
պատասխան սեկցիաները, պատ խմբակները:

6. Հանրապետական մարմինների ինֆորմացիանե-
րում պատշաճ տեղ տալ սեկցիաների և խմբակների
կատարած աշխատանքների մասին և այլն:

7. Հանրապետական մարմինների կազմ-մասսայա-
կան գծով կատարվելիք աշխատանքներում միասնակա-
նությունը և հետեղականությունն ապահովելու հա-
մար հանձնաբարել կենտրոնական կազմակետին՝ այդ
մարմինների գործունեությունը միասնացնել, դեկավա-
րել և այդ նպատակով գումարել պարբերական կազմ-
խորհրդակցություններ, լսելով այդ խորհրդակցու-
թյուններում նաև հիշյալ մարմինների գեկուցումները՝
խորհրդակցությունների գծով նրանց կատարած կազմ-մասսայա-
կան աշխատանքների մասին:

Երջգործկոմների կազմ-մասսայական աշխատանք-
ների գծով

Թեև գտվառների վերացմամբ չըջանային գործադիր
կոմիտեներին և վերապահվում գյուղի և գյուղատնտե-
սության սոցիալիստական վերակառուցման կենդանի,
անմիջական կոնկրետ դեկավարությունը և ոժանդակու-
թյունը, սակայն չըջգործ կոմներն իրենց աշխատանք-
ները լիովին չեն վերակառուցել այնպես, վորագեսզի
խորհուրդների կազմ-մասսայական աշխատանքները
դրվեյին անհրաժեշտ բարձրության վրա, ըստ վորում—

1. Երջգործկոմները չեն ունեցել և մեծ մասամբ
մինչ որս ել չունեն կազմ-մասսայական աշխատանքների
անմիջական դեկավարության որդան՝ կազմբաժիններ:

2. Անբավարար են կազմակերպել ու գլխավորել
խորհրդային-հանարակական ակտիվը, հատկապես սեկ-
ցիաների և պատ. խմբակների գծով:

3. Կազմ-մասսայական և հասարակական-բացա-
տրական աշխատանքների սիստեմն ու մեթոդները՝
յերբեմն փոխարինում են վարչական և նույնիսկ վարչա-
րաբական յեղանակներով ու ձեւերով և այլն:

Այս բոլոր բացերը վերացնելու և չըջգործկոմների
կազմ-մասսայական աշխատանքները վերակառուցելու
համար անհրաժեշտ համարել:

4. Երջգործկոմներն ապահովել կազմբաժիններով
ու կազմ-մասսայական աշխատանքների հրահանդիչնե-
րով և այդ կազմ-մասսայական աշխատանքների ծավալ-
ման-ուժեղացման նպատակով չըջգործկոմներին կից
ռահմանել կազմ-խորհրդակցություններ:

5. Կազմակերպել արտահաստիքային հրահանդիչ-
ներ, ներդրավելով չըջանի լավագույն ակտիվը և առա-
նընաց գործունեությանը ծրագրային - պլանային
բնույթ, ապահովել աշխատանքների միասնությունը և
հետեղականությունը, կտտարել նրանց մեջ աշխատան-
քի նպատակահարմար բաշխում:

6. Հսել կազմ-խորհրդակցությունների նիստերին
արտահաստիքային հրահանդիչների, խորհուրդների
և կցիաների, պատ. խմբակների, ինչպես և ՄՏԿ-ների,
կորոնատեսությունների և այլ գեկուցումները:

7. Կազմ-կոլեգիայի, կազմբաժինների, ինչպես և
ընդհանրապես խորհուրդների գծով կայացած վորոշում-
ների, արված կարգադրությունների ճիշտ և ժամանա-
կին կտարարումն ապահովելու համար՝ այդ հրահանդիչ-
ներից մեկ-յեկուսին ապահովել հասարակական այլ պար-
ատականություններից և հանձնարարել վերոհիշյալ վո-
րոշումների ու կարգադրությունների կատարման ստու-
գումը տեղերում, գյուղերում, գյուղատնտեսական,
արտադրական ձեռնարկներում:

8. Անհրաժեշտ համարել, վոր չըջգործկոմների
բաժինները՝ կազմ-մասսայական բնույթի բոլոր հար-
ցերը նախագահության նիստին ներկայացնելուց առաջ՝
քննարկեն կազմ-կոլեգիայում:

9. Պարտադրել, վորպեսզի առանց կազմ-բաժիննե-
րի գիտության՝ չըջգործկոմների բաժիններն ու
չըջանային պետական և հասարակական հիմնարկու-
թյունները չկատարեն վորեւ կազմակերպչական ձեռ-
նարկ ու աշխատանք:

10. Հանձնարարել բոլոր չըջգործկոմներին վերա-
կազմակերպել և աշխատացնել սեկցիաները, ներդրավե-
լով սեկցիաների աշխատանքներում խորհրդային լայն
ակտիվը, տալ զեկավար պլան-ցուցմունք, ունենալ կեն-
դանի կապ և այլն:

11. Ուժեղացնել գործկոմների բաժինների ու սեկ-
ցիաների ոպերատիվ զեկավարություն և կազմ գյուղա-
կուն համապատասխան սեկցիաների նկատմամբ և այդ
զեկավարությունն ու կազմ ուժեղացնելու և ամրապն-
դելու համար՝ պարբերաբար հրավիրել չըջանային ու
յենթաչըջանային խորհրդակցություններ, տալ անմի-
ջական զեկավար ցուցմունքներ և այլն:

12. Հանձնարարել չըջգործկոմներին՝ Հաճախակե-
հրավիրել սեկցիաների, խորհրդային խմբակների, հրո-

կիչ պոստերի հավաքներ, մորթիլիզացիայի յենթաթկել նրանց ամբողջ ուժերը՝ տնտեսական-քաղաքական կամպանիաները ժամանակին և-լրիվ կատարելու համար:

13. Պարբերաբար հրավիրել շրջզործկոմների պլենումների ու նախագահությունների նիստերը, համապատասխան գյուղերում, խորհրդականություններում, ՄՏ Կայաններում, կուտանսություններում, հրավիրելով այդ նիստերին աշխատավորական լայն ակտիվը, սգտագործելով վերջինս՝ կայացած վորոշումները կենսագործելու:

14. Շրջզործկոմների, նրանց բաժինների աշխատանքներում, ինչպես և խորհրդագներում և նրանց հաստրակական ողակներում կիրառել աշխատանքի սոցիալիստական ձևերը՝ հիմք ունենալով ընկ. Ստալինի նցուցմունքները և ապահովելով աշխատանքների պլանայնությունն ու ծրագրայնությունը:

ՅԵ.

Քաղաքային յեվ բան-ավանային խորհուրդների գծով.

Քաղաքային ու բանվորական ավանային խորհուրդներն իրենց աշխատանքների բովանդակությունը և ձեռքը պետք ե վերակառուցեն՝ համաձայն կուսակցության և կառավարության ղեկավար առաջադրանքների՝ յերեսով դեպի արտադրություն, քաղաքի սոցիալիստական վերակառուցում, կոմունալ շինարարության հիմնական և արագ վերափոխումն, բանվորների և աշխատավորների մատակարարման և կուլտուր-կենցաղային կարիքների սպասարկումն:

Հեշյալ մարտական առաջադրանքների արագ և լիակատար կենսագործման համար անհրաժեշտ և բանվորների և ընդհանրապես աշխատավորական-մասնագիտական բոլոր ուժերի ներգրավումն աշխատանքներում, վորի նախապայմանն են հանդիսանում խորհուրդների կազմ-մասսայական աշխատանքները:

Արձանագրելով հանդերձ, վոր բան-ավանային խոր-

հուրդների գծով ձեռք են բերված զգալի քանակական և վորակական նվաճումներ՝ բայց և այնպես խորհրդակցությունը դեռ անհամաշխափ է համարում այդ նվաճումները սոցիալիստական շինարարության ներկա և առաջի պահանջների և բանվորների ու աշխատավորների որ-ավուր ածող կուլտուր-կենցաղային կարիքների համապետ:

Քաղաքային և բանավանային խորհուրդների աշխատանքների վերակառուցման, մասսաներին խորհուրդների աշխատանքներում ներգրավելու և այդ իսկ նպատակով կազմ-մասսայական աշխատանքները ծավալելու համար անհրաժեշտ համարել:

1. Քաղաքային և բան-ավանային խորհուրդների աշխատանքները վերոհիշյալ մարտական խնդիրների և պլենումները, ինչպես և նախագահությունների նիստերն, այլև կարեռը խորհրդակցությունները պարբերաբար գումարել տնտեսական-շինարարական ձեռնարկություններում, գործարաններում, նորակառույցներում, տրանսպորտի կարեռը հանդույցներում և այլն:

2. Այդ պլենումների և նիստերի շուրջը խորհրդային աշխատավորական ակտիվը ներգրավելու համար՝ քննարկել տնտեսական-քաղաքական, կուլտուր-կենցաղային և այլ մարտական ու շահագրգիռ խնդիրները:

3. Բանվորական-աշխատավորական ակտիվի ներգրավման խնդրին տալ վոչ թե ընդհանուր-ազիտացիոն բնույթ, այլ կոնկրետ կազմակերպչական՝ մասսաները հաղորդակից դարձնելով ամենորյա տնմիջական գործնական աշխատանքներին:

4. Հիշյալ ձեռնարկներում, նորակառույցներում, տրանսպորտում և այլ բնագավառներում սահմանել խորհուրդների նախագահության անդամների, այլև խորհրդային սուաջավոր ակտիվիստների հերթապահություն՝ ընդունելու և արագորեն ու հիմնավորապես քննարկելու բանվորների դիմում—զանգատները, արտադրության և այլ ձեռնարկների ներսում ծավալել խորհրդային մասսայական աշխատանքն և այլն:

Քաղաքային և բան. ավանային խորհուրդների
աշխատանքները վերոհիշյալ մարտական խնդիրների և
աշխատանքների ուղղությամբ վերակառուցելու հա-
մար՝ անհրաժեշտ գտնելով վորպեսզի՝

5. Խորհուրդների բոլոր բաժիններն ել ունենան
աշխատանքների այնպիսի ծրագիր—պլան, վոր ընդուր-
կեր ավելացնի տեսչության վերապահված բոլոր
խնդիրները:

6. Կազմակերպչական կազմ—մասսայական բնույթի
բոլոր խնդիրները նախապատրաստել կազմ բաժինների
միջոցով և ապա միայն ներկայացնել խորհրդի նախա-
դահության քննարկության:

7. Քաղաքային և բան-ավանային խորհուրդներում
և նախագահության նիստերում պարբերաբար լսել
կազմ բաժինների զեկուցումները՝ կազմ—մասսայական
աշխատանքների սիստեմի ուսուցիչնալացման ընթացքի և
արդյունքների մասին։

8. Խորհուրդների գծով կատարվող աշխատանքների
կատարման փաստական ստուգումն ապահովելու համար
Յերեանի և Լենինականի քաղխորհուրդներում՝ կազմա-
կերպել կատարման ստուգման դործը, նույնը կամավո-
րության հիմունքներով նաև բանավանային խորհուրդ-
ներում, ողաագործելով այդ նպատակով հատկապես
սոց.համատեղիչներին։

9. Ալլահվերդու, Արթիկի և Ղափանի շրջկործկոմ-
ների բաժինների վարիչների վրա դնել միաժամանակ և
իրենց շրջանների բանավանային խորհուրդների համա-
պատասխան պարտականությունները, ոգտագործելով
այդ ուղղությամբ սեկցիաները և սեկցիաների բյուրո-
ները, ինչպես և գործի դնելով տեղական խորհրդային
ակտիվը։

10. Յերեանի և Լենինականի քաղխորհուրդների
կազմ բաժիններին, իսկ Ղափանի և Արթիկի, Ալ-
լահվերդու և Ղափանի ավանային խորհուրդների նախա-
գահություններին կից հրավիրել կազմ—խորհրդակցու-
թյուններ և այդ խորհրդակցությունների միջոցով նա-

խապատրաստել և քննարկել խորհուրդների առաջ դըր-
ված կազմ—մասսայական կարևոր խնդիրները։

11. Քաղխորհուրդներին կից կազմակերպել արտա-
հաստիքային հրահանգիչների ինստիտուտ, ընդգրկելով
այդ հրահանգչական աշխատանքներում ձեռնհաս խոր-
հրդային ակտիվը և մանավանդ արտադրության մեջ
աչքի ընկնող հարվածայիններին։

12. Արտահաստիքային հրահանգիչների մեջ աշխա-
տանքը բաժանել ըստ իրենց մասնագիտությունների և
կոնկրետ բնագավառների (գործարան, տրանսպորտ,
կոռուպերացիա և այլն)։

13. Արտահաստիքային հրահանգիչների սիստեմի
ամրապնդման և աշխատանքի աշխուժացման համար՝
պարբերաբար հրավիրել հրահանգչական խորհրդակցու-
թյուններ։

14. Հանձնարարել կենտգործկոմի կազմ բաժնին՝
մշակել և ներկայացնել ԿԳԿ-ի նախագահության հաս-
տատության տեղական խորհուրդների արտահաստի-
քային հրահանգիչների կանոնադրությունը։

15. Համարելով սեկցիաները մասսաներին խորհր-
դային աշխատանքներում ներգրավելու ամենահիմնա-
կան սիստեմներից մեկը և կազմ—մասսայական աշխա-
տանքների ծագալման կարևորագույն լծակը՝ խորհր-
դակցությունն անհրաժեշտ է գտնում։

16. Ամենակարճ ժամանակամիջոցում արմատապես
վերակառուցել սեկցիոն աշխատանքները, մասնագիտաց-
ներով դրանք այն հաշվով, վորպեսզի յուրաքանչյուր
սեկցիա ընդգրկի խորհրդային սոցիալիստական շինա-
րարության կոնկրետ վորոշ բնագավառ։

17. Սեկցիաները խորհրդի համապատասխան բա-
ժինների հետ միասին պետք է կազմեն իրենց աշխատան-
քի ծրագիր—պլանը, լինելով հաշվետու և պատասխա-
նատու այդ ծրագիր—պլանի մշակման ու կենսագործ-
ման համար։

18. Ընդգրկել սեկցիաներում վոչ միայն բոլոր
պատգամավորներին, այլ և քաղաքի ու բանավանի

խորհրդային վողջ ակտիվը, առաջին հերթին հարվածաւ-
յին քանիզորությունը:

19. Սեկցիաների աշխատանքները կատարել՝ սո-
ցիալիստական արտադրության բարձրացման, կոմունալ
չինարության վերակառուցման, բանվորության
կուրատը՝ կենցաղային սպասարկման, աշխատանքի
դիսցիպլինայի բարձրացման, պրոգրամման, վերացման,
սոց. սեփականության պաշտպանության և այլ մարտա-
կան առաջդրանքների տեսանկյուններով:

20. Վերստուգել և թարմացնել սեկցիաների բյու-
րոների կազմը, հետ կանչելով անձնունհասներին ու ան-
դրաբեխիքներին և ընդհակառակն ընտրելով հարվածա-
յին, ակտիվ աշխատողներին:

21. Սեկցիաների վորոշումների և աշխատանքների
կատարման փաստական ստուգումն ապահովելու հա-
մար՝ նշանակել այդ նպատակով հատուկ սեկցիաներ և
բացի սեկցիաների ընդհանուր ծրագրային կարգով հար-
վիրող նիստերից՝ պարբերաբար գումարել նաև սեկցիա-
ների ընդհանուր միացյալ ժողովներ՝ քննելու քաղաքա-
յին ու բանավանային ընդհանրական նշանակություն ու-
նեցող խնդիրները:

22. Յերեսով գեպի արտադրություն առաջդրանքի
կենսագործումն անհրաժեշտ և դարձնում սերտ կապ
հաստատել արտադրական ձեռնարկների, գործարաննե-
րի, տրանսպորտի, նորակառույցների հետ:

Այդ նպատակի իրականացման համար՝

23. Բոլոր ձեռնարկներում, գործարաններում, նո-
րակառույցներում, տրանսպորտում և այլն՝ կազմակեր-
պել պատգամավորական խմբակներ:

24. Այդ խմբակները, վորպես խորհուրդների նախ-
ական մասսայական քջիջները՝ հանդիսանում են կա-
րեսը կովաններ՝ տվյալ ձեռնարկության կոլեկտիվին
մասնակից դարձնելու յերկրի կառավարության գոր-
ծում:

25. Այնտեղ, ուր արդեն կազմակերպված են այդ-
պիսիք, արագ կերպով վերակառուցել և աշխուժացնել

նրանց, հիմք ընդունելով թե ցեխային և թե՝ համա-
գործարանային կազմակերպչական սիստեմը, այլև
կազմակերպել համագործարանային պատգամավորա-
կան խմբակների բյուրոներ:

26. Տվյալ ցեխի ու գործարանի վողջ հարվածային
բանվորությունն ընդուրելով պատգամավորական խմբակ-
ներում, ինչպես և համագործարանային խմբակների
ներառման կազմակերպել բրիգադներ (տնտէաշվարկա-
յին, կուլտ-կենցաղային, բան-մատակարարման և
այլն):

27. Պարբերաբար գումարել պատգամավորական
խմբակների և նրանց զեկավարների միացյալ խորհր-
դակցություններ, ամրացնելով արտահատությային
հրահանգիչներին տվյալ պատ. խմբակին:

28. Խորհուրդների նախագործյան նիստերին, ինչ-
պես և կազմախորհրդակցություններում լսել և քննարկել
պատագամավորական խմբակների զեկուցումներն իրենց
կատարած աշխատանքների մասին:

29. Սահմանել արդյունաբերական ձեռնարկների
պատգամավորական խմբակների շեֆություն դյուղա-
տնտեսական ձեռնարկությունների պատ. խմբակների
նկատմամբ:

30. Ուժեղացնել սոցիալիստական համատեղությու-
նը՝ քաղաքային և բանավանային խորհուրդների աշխա-
տանքներում՝ եժանացնելու, ձկունացնելու և թարմաց-
նելու պետ. ապարատը, պայքարելու բյուրոկրատիզմի
դեմ և այլն:

31. Կիրառել պետհիմնարկների նկատմամբ բանվո-
րական կոլեկտիվների շեֆություն՝ պետ-ապարատի
բանվորականացման, պետհիմնարկության և արտա-
գրության շաղկապի ամբացման նպատակներով և այլն:

32. Համարել քաղաքային խորհուրդների 1928 թ.
կանոնադրությունն անհամապատասխան սոցիալիստա-
կան չնարարության, հատկապես՝ քաղաքների սոցիա-
լիստական վերակառուցման ներկա ետապի պահանջե-
րին և հանձնարարել կԳե-ի կազմակենին՝ մշակել քաղ-

Խորհուրդների ու բանավանների նոր կանոնադրություն
և ներկայացնել դա ընդհանուր կարգով կենտրոնակոմի
հաստատության:

33. Ամենակարճ ժամանակում ուսումնասիրել Սար-
դարաբաղում, Անի-Գեմզայում և Քիմշինում բան-ա-
վանային խորհուրդներ կազմակերպելու խնդիրը, այլ
արմատապես վերակառուցել Ղարաքիլիսայի քաղխոր-
չըրդի աշխատանքները:

Զ.

Գյուղական խորհուրդների գծով

Գյուղական խորհուրդների և խորհրդային հասա-
րակական ակտիվի գործունեության հիմնական ողակ-
ներն ու լծակները հանդիսանում են խորհուրդների սեկ-
ցիաներն ու պատգամավորական խմբակները:

Մինչեռ հակառակ սահմանադրության և հատ-
կապես գյուղական խորհուրդների գործող կանոնադրու-
թյան ստեղծած լայն համարավորությունների գյուղի աշ-
խատավորական ակտիվը դեռ արժանի չափով չի ընդ-
դուրկված խորհրդային աշխատանքներում, չնայած կու-
տանեսական-աշխատավորական այդ ակտիվի քաղաքա-
կան-ընդունակարգային գիտակցության արագ աճման և
աշխատանքի ու պայքարի մարտական պատրաստակա-
մության:

Բացի խորհրդային գեմոկրատիզմի հիմնական ա-
ռաջադրությունների խախտման ու անտեսման ընդհա-
նուր լեռնություններից՝ հատկապես գյուղական խոր-
հուրդների գծով՝

1. Սեկցիաները դեռ ամենուրեք կազմակերպված
չեն, իսկ այնտեղ, վորտեղ կազմակերպված են՝ զուրկ են
անմիջական ոպերատիվ ղեկավարությունից և չեն վե-
րակառուցել իրենց աշխատանքների սիստեմը, մեթոդ-
ները, ձևերը:

2. Դեռևս վերջնականապես չեն ձեւակերպվել կու-
տանեսություններին, ՄՏ կայաններին, խորհանտեսու-

թյուններին կից պատգամավորական խմբակները, իսկ
այնտեղ, վորտեղ նրանք ձեւակերպվել են՝ տակավին
զուրկ են կայունությունից և ղեկավարությունից և
այլն:

Գյուղական խորհուրդների և նրանց հասարակական
մասսայական ողակների աշխատանքների վերակառուց-
ման և կոլտնտեսական, չքավոր ու միջակ գյուղացիու-
թյան, ինչպես և գյուղում աշխատող ինտելիգենցիայի
ակտիվությունը և փորձառությունը ավելի արդյունա-
վետ կերպով ողատագործելու համար՝

3. Բոլոր գյուղխորհուրդներում կազմակերպել և
վերակառուցել այն բոլոր սեկցիաները, վորոնք նախա-
տեսված են գյուղական խորհուրդների կանոնադրու-
թյամբ և հետագայի վորոշումներով:

4. Կանխելու համար սեկցիաների դիմագրկումը,
աշխատանքների զուգադիպումը, գյուղակտիվի ուժերի
ավելորդ ծախսումը և այլն խուսափել ավելորդ սեկցիա-
ների կամ հանձնաժողովների կազմակերպումից:

5. Սեկցիաների աշխատանքներում ներդրավել ամ-
բողջապես վոչ միայն խորհրդի անդամներին, այլև
գյուղական խորհրդային-հասարակական ակտիվը:

6. Համարել պարտադիր գյուղխորհրդի անդամների
ժողովությունը սեկցիանն աշխատանքներին, վերա-
պահելով խորհրդի պատգամավորներին ազատ իրա-
վունք անդամակցել իրենց ուզած սեկցիաներում:

7. Սեկցիաների թարմացման, աշխատացման և վե-
րակառուցման նորագույն վերանայել անդամակցող-
ների ցուցակը և դատավորել ուժերն այնպես, վոր սեկ-
ցիաներն ապահովված լինեն համապատասխան աշխա-
տողներով:

8. Վերանայման ընթացքում իրենց պարտականու-
թյուններում թերացող պատգամավորներին հետ կանչել
և փոխարինել նոր ու թարմ ուժերով:

9. Սեկցիաների վորոշումները ներկայացնել գյու-
խորհուրդների նախագահության հաստատության՝ իսկ
անհետաձգելի ղեպերում՝ նախագահին, պայմանով,

Վոր այդ վորոշումները հետագային քննարկվեն ու հաս-
տատվեն նախագահության հերթական նիստերում:

10. Սեկցիաների աշխատանքների անմիջական զե-
կավարության համար՝ ընտրել բյուրոներ՝ 3—5 հոգուց
բաղկացած, ըստ վորում բյուրոները նախագես ձևա-
վորում են սեկցիաների վորոշումները և ապա ներկա-
յացնում գյուղխորհրդի նախագահության հավանու-
թյան: Վորոշումների չափաղականության դեպքերում
այդ ձևավորումը կատարում է բյուրոյի նախագահը,
անմիջապես իրազեկ դարձնելով դրա մասին բյուրոյի
հերթական պլենումում:

11. Սեկցիաների աշխատանքների կոնկրետացման և
մասնագիտացման համար՝ կազմակերպել և առանձնաց-
նել հատուկ բրիգադներ՝ ըստ համապատասխան ա-
ռանձին բնագավառների:

12. Վերակառուցել և աշխուժացնել գյուղարտա-
գրական խորհրդակցությունները՝ աշխատանքի կազմա-
կերպության հիմք ունենալով մասնագիտացման սկզբ-
ունքը և տվյալ գյուղի հողագործական կուլտուրայի
առանձնահատկությունները:

13. Ինքնուրույն խորհրդից զուրկ գյուղերում (յեն-
թակա գյուղեր) խորհրդային վարչական աշխատանքնե-
րը կատարվում են գյուղխորհրդի վիազորի միջոցով, իսկ
կոլտնտեսական, աշխատավորական մասսաները խոր-
հրդային, անմիջական գործնական աշխատանքներին
մասնակից դարձնելու համար կազմվում են գյուղական
սեկցիաներ, վորոնք աշխատելու յեն գյուղական խոր-
հրդային կանոնադրության 90, 107 և 108—112 հոդ-
վածների հիմունքներով, ըստ վորում գյուղսեկցիայի
նախագահը հանդիսանում է գյուղլիքագորը:

14. Բոլոր կոլտնտեսություններին, խորհրդա-
կան սեկցիաներին և ՄՏ Կայաններին կից կազմակերպել պատ-
գամավորական խմբակներ, իսկ այնուղ, ուր արդեն
կազմակերպված են՝ վերակառուցել և աշխուժացնել
նրանց աշխատանքները, թարմացնել և ակտիվացնել
անձնական կազմը:

52

15. Խորհրդային խմբակների աշխատանքներն ա-
վելի պնմիջական, ուղերատիլ և կենդանի գարճներու
համար՝ կրտսեսություններում, խորհրդատեսություն-
ների առանձին ճյուղերում և ՄՏ Կայանների ցեխներում
կազմակերպել պատգամավորական խմբակների հակեչ
պոստեր՝ 3—5 հոգուց բաղկացած:

16. Պատգամավորական խմբակներին կցել՝
աշխատանքի կոնկրետ բնագավառի, վորհաղթելով պատ-
գամավորական խմբակների աշխատանքների ծանրու-
թյան կենտրոնն արտադրական բրիգադները:

17. Կցվածները, ինչպես և հսկիչ պոստերն իրենց
ամբողջ գործունեության համար հաշվետու և ուստաս-
խանատու յեն համապատասխան պատգամավորական
խմբակների հանդեպ՝ վորոնց նիստերում պետք ե պար-
բերաբար լսել հսկիչ պոստերի, ինչպես և կցված ընկեր-
ների գեկուցումները:

18. Գյուղխորհրդները, ինչպես և նրանց բոլոր
հասարակական մասսայական ողակներն իրենց աշխա-
տանքների վերակառուցման հիմք պետք ե ունենան՝ յե-
րեսները գետի գյուղի սոցիալիստական վերակառուցու-
մը՝ կոլտնտեսություններ, խորհրդատեսություններ, ՄՏ
Կայաններ: Այս իսկ պատճառով վոչ միայն պատգամա-
վորական խմբակների, այլև գյուղխորհրդների ու
նրանց սեկցիաների նիստերը գումարել այդ սոցիալիս-
տական ձեռնարկներում, հատկապես աշխատանքը թե-
րակատարող բրիգադներում՝ քննարկելու, պարզելու և
վերացնելու թերակատարման պատճառները: Պատգա-
մավորական խմբակներում և հսկիչ պոստերում հրա-
տարակել պատի թերթեր, լուսաբանելով հատկապես
տվյալ բնագավառի աշխատանքները:

19. Գյուղխորհրդի սեկցիաների և պատգամավորա-
կան խմբակների գծով առանձնացնել ձեռնհաս, գրա-
գետ, կամավոր-ինֆորմատորներ, վորոնք ընդունակ
լինեն ամփոփել յուրաքանչյուր կատարված աշխատանք,
արձանագրել աշխատանքի թույլ կողմերը, վորհանակել

53

Դրական փորձերն այլ սեկցիաների, պատմմբակների, բրիդադների, հսկիչ պոստերի հետ:

20. Խորհրդային սեկցիաների, պատգամավորական խմբակների, և ընդհանրապես խորհրդային ակտիվի պատասխանառության գիտակցությունը խթանելու, պարտաճանաչության զգացմունքը բարձրացնելու, պարբերական հաշվետվությունները և կատարման իրական ստուգումն ապահովելու համար և այլն՝ խորհրդակցությունն անհրաժեշտ է համարում:

21. Յուրաքանչյուր սեկցիայում և պատգամավորական խմբակում առանձնացնել մեկին, պարտավորեցնելով նրան ստուգել, թե սեկցիաները, պատ. խմբակները ինչպես են կատարում խորհրդային վերադաս մարմինների վորոշումները, կարգադրությունները:

22. Անշեղորեն կիրառել խորհուրդների պատգամավորների և խորհրդային հասարակական ողակների անդամների պարբերական հաշվետու զեկուցումները, թե ընտրողների առաջ և թե՛ այլ համապատասխան նիստերում:

23. Խորհուրդների պլենումների և նախագահությունների նիստերում կոլտնտեսությունների, վերջիններիս բրիգադների և այլ զեկուցումներ քննարկելիս, լսել նաև պատգամավորական խմբակների, հսկիչ պոստերի, կցվածների հարակից զեկուցումները:

24. Խորհուրդների որակարգի խնդիրները վաղորոք քննարկել, մշակել համապատասխան սեկցիաներում և պատ.խմբակներում, ըստ վորում մասսայական ակտիվը շահագրգռել գյուղի սոցիալիստական վերակառուցման մարտական խնդիրներով:

Գյուղվարհուրդների ու նրանց ողակների և գյուղատնտեսության սոցիալիստական ձեռնարկների կենդանի շաղկապն ապահովելու և ամրապնդելու համար՝ հրավիրել խորհուրդների լայնացրած պլենումներ, մասնակցությամբ կոլտնտեսականների և ՄՏԿ ու խորհուրդներության հարվածային բանվորների, ըստ վորում այդ նիս-

տերը գումարել կոլտնտեսություններում, խորհուրդներություններում, ՄՏԿ կայաններում և այլն:

25. Յանկալի և նպատակահարմար համարել գյուղատնտերդների պլենումների և նախագահությունների նիստերը գումարել յենթակա գյուղերում և քննարկել այդ նիստերում հատկապես տվյալ գյուղին անմիջապես շահագրգռող խնդիրները, ըստ վորում անհրաժեշտ ճանաչել, լսել գյուղյաղորի համապատասխան հիմնական թե հարակից զեկուցումներ:

26. Արձանագրել, վոր գյուղական վերստուգիչ հանձնաժողովներն ակնհայտ թույլ են աշխատում, իսկ շատ տեղերում նույնիսկ լիակատար անգործության են մատնված, մինչդեռ վերստուգիչ հանձնաժողովները կուրեորագույն լծակներն են խորհրդային դեմոկրատիայի կենսագործման, մասսաների ինքնազործունեության արտահայտության և բանվորների, կոլտնտեսականների և ընդհանրապես աշխատավորների հավաքական վերահսկողության:

Այս կարևորագույն բացը վերացնելու համար՝ առաջարկել ըրջգործկոմներին՝ վերստուգիչ հանձնաժողովների շուրջը ստեղծել լայն հասարակական ակտիվ, տանել բացատրական աշխատանք, կազմակերպել խորհրդային աշխատավորական կարծիք ու ակտիվ, զեկավարել նրանց աշխատանքները, ապահովել գյուղական վերստուգիչ հանձնաժողովների անձնական կազմի թարմացումը և գործունակությունը, անձեռնհաս ու անբարեխիղ անդամների հետ կանչումը, կոլտնտեսական, հարվածային ակտիվիստների ընտրությունը, ամրապնդել ընտրողների ու վերստուգիչ հանձնաժողովների միջև անմիջական կենդանի շաղկապն և ընդհանրապես ձեռնարկել կազմմասսայական բոլոր կոնկրետ միջոցները՝ ապահովելու մասսաների հսկողությունը, հատկապես գյուղյարհուրդների Փինանսա-տնտեսական աշխատանքների նկատմամբ:

27. Աշխատանքային-արտադրական դիսցիլինան ամրապնդելու, հանրային-սոցիալիստական գույքի

Նկատմամբ հոգատարությունն ուժեղացնելու, մասսաների մասնակցությունը խորհրդային արդարադատության բնագավառում ծավալելու համար՝ բոլոր կոլտրնաեւություններին, խորհնանտեսություններին և ՄՏ կայաններին կից կազմակերպել ընկերական-արտադրական դատարաններ, իսկ այնուեղ, ուր արդեն իսկ կազմակերպի են այդպիսիք աշխուժացնել և վերակառուցել աշխատանքները:

28. Համարել անբավարար կանանց մասնակցությունը խորհուրդների և նրանց ստորին ողակների աշխատանքներում և այդ կարևոր բացը վերացնելու համար ծավալել լայն հասարակական, բացարակական ու կազմական աշխատանք՝ աշխատավոր կանանց շարքերում, ներգրավելով նրանց խորհուրդների և սեկցիաների ու պատ. խմբակների աշխատանքներում:

29. Գյուղինորհուրդների և նրանց հասարակական-կազմակերպչական բոլոր ողակների աշխատանքներում կիրառել աշխատանքի սոցիալիստական ձևերը՝ ընկ. Մտալինի 6 ցուցմունքների հիմունքներով, անողոքար պար պայքարելով այդ սոցիալիստական ձևերի գեղծարկումների գեմ և ընդհակառակը պարզեատրելով ու խրախուսելով հարվածայիններին, աշխատանքի ենտուզիաստներին:

30. Գյուղական-խորհրդային աշխատանքների վերակառուցման գործը մասսայականացնելու, դրական փորձերի ընդորինակումն ու փոխանակությունը ծավալելու և կոնկրետացնելու համար՝ տիպիկ ըրջաններում կազմակերպել որինակելի գյուղխորհուրդներ, վորոնք իրենց գործունեության լավ վորակով հանդիսանային ընդորինակման արժանի վոչ միայն ըրջանացին, այլ և հանրապետական մասշտաբով:

31. Համարել անհրաժեշտ, վորակեազի որինակելի գյուղխորհուրդների մեջ լինի սերտ կենդանի կազ, նրանք իրար հետ կնքեն սոցմքցման պայմանագրեր, կատարեն փոխադարձ ստուգումներ, իրար հաղորդա-

կից դարձնեն ձեռք բերված նվաճումների մասին և այլն:

32. Կազմակերպել ըրջանային և հանրապետական մասշտաբով որինակելի գյուղխորհուրդների հավաքներ, կոնֆերանսներ:

33. Որինակելի գյուղխորհուրդների գաղափարը և ձեռք բերված նվաճումները մասսայականացնելու համար՝ բարտավորեցնել մամուլի բոլոր որդաններին, համապետես «Խորհրդային Շինարարության» լուսաբանել այդ գյուղխորհուրդների վողջ աշխատանքները, տալ պարբերական ամփոփումներ ձեռք բերված նվաճումների մասին, մերկացնել և ուղղել կատարված սխալները և ընդհանրապես պահանջել նրանց փորձերի մասսայական փոխանակությունը:

34. Որինակելի գյուղխորհուրդների աշխատանքի վորակելի բարձրացումը խթանելու և խրախուսելու համար՝ սահմանել ըրջանային թե հանրապետական մասշտաբով պարզեատրումներ, այլ և կենտրոնացնելի անվանությունը պահանջիկ գրոշակի:

III

Պարբերական մամուլի մասին

Մամուլը խորհրդային շինարարության և հատկապես խորհուրդների կազմ-մասսայական աշխատանքների ասպարիզում լինելու յև բավարույն «կոլեկտիվ պրոպագանդիստ» և «կոլեկտիվ կազմակերպիչը»:

Բարձր զնահատելով մամուլի այդ գերը խորհուրդների աշխատանքների վերակառուցման ասպարիզում վերակառուցման ամբողջ տալու համար մինչ այժմյան անմիտիթար պրակտիկային՝ խորհրդակցությունը համարում և անհրաժեշտ հետևյալը:

1. Պարտավորեցնել Հայաստանում լույս տեսնող մամուլի բոլոր կենտրոնական և տեղական որդաններին՝ հատկացնել հատուկ բաժին, սփերված խորհուրդներին, խորհրդային շինարարության և հատկապես խորհուրդների կազմ-մասսայական աշխատանքների ձևերին, մեթոդներին:

2. Հանձնարարել մամուլի նույն որդաններին՝ սիս-
տեմատիկաբար և բրիգադային ձևով ուսումնասիրել
շրջործկոմների, քաղխորհուրդների և դյուլխորհուրդ-
ների աշխատանքները, հատկապես մասսայական-հա-
սարակական ողակները (սեկցիաները, պատգամավո-
րական խմբակները, և այլն), դարձնելով այդ աշխա-
տանքների ձևերն ու արդյունքները և այդ աշխա-
րության—ստուգումների ամփոփումները՝ հանրային
սեփականություն:

3. Խորհուրդների և մամուլի որդանների կազմ
ավելի սերտ, կենդանի, մնայուն դարձնելու համար՝
տեղերում և խորհուրդներին կից ունենալ թղթակիցնե-
րի կադր, կազմակերպել հսկիչ պոստեր, ապահովելով
այդ թղթակիցների և հսկիչ պոստերի նկատմամբ ան-
միջական զեկավարությունը:

4. Հատկապես «Խորհրդային Շինարարության»
խմբագրության պարտավորեցնել՝
ա) Թերթի գործունեության հիմնական տեսան-
կյուն ունենալ գյուղաբնակչուրդները, գյուղի սոցիալիս-
տական վերակառուցումը, գյուղական խորհրդային-
հասարակական ակտիվը.

բ) Թերթում ավելի մեծ տեղ տալ շրջործկոմների
և գյուղինորհուրդների աշխատանքներին.

գ) առանձնապես լուսաբանել խորհուրդների կազմ-
մասսայական աշխատանքների ձևերն ու սիստեմները,
նվաճումներն ու բացերը.

դ) ապահովել թերթի պարբերական հրատարակու-
թյունը և ամենակարճ ժամանակում իջոցում դարձնել
այն յերիշաբաթաթերթ.

յե) կանոնավորել թերթի բաշխման և առաքման
գործն այնպես, վոր տեղերը կանոնավոր, պարբերա-
բար ու ժամանակին ստանան հերթական համարները.
զ) կազմակերպել տեղերում թղթակիցների ակտիվ,
հսկիչ պոստեր և նրանց միջոցով կազմակերպել խոր-
հուրդների աշխատանքների հաճախակի ստուգումներ,
թղթական հավաքներ, կոնֆերանսներ և այլն.

ե) յեվ ընդհանրապես վերակառուցել—աշխատաց-
նել «Խորհրդային Շինարարությունը» այնպես, վոր նա-
իրոք դառնա խորհրդային շինարարության ասպարի-
զում՝ մասսաների քաղ. դաստիարակության և դործ-
նական աշխատանքների մարտական պրոպագանդիստն
ու կազմակերպիչը.

ը) «Խորհրդային Շինարարություն» թերթին զու-
գընթաց ապահովել Խորհրդային Շինարարության և
Խորհրդային իրավունքին վերաբերյալ հրատարակու-
թյունների գործը՝ լույս ընծայելով գրքեր, ժողովա-
ծուներ, ձեռնարկներ, ծրագրներ, հրահանգներ և այլն՝
սիրված խորհրդային Սահմանադրության, խորհուրդ-
ների կազմ-մասսայական աշխատանքներին և սոցիա-
լական-քաղաքական, տնտեսական, կուլտուրական հիմ-
նական-մարտական նշանակություն ունեցող խնդիրնե-
նական՝ անմիջական կապակցությամբ խորհրդային աշ-
խատանքների հետ:

IV.

Ինֆորմացիոն աշխատանքների մասին

Կենտրոնի ու տեղերի սերտ, կենդանի, մնայուն
փոխադարձ կազմ պահպանելու, ոպերատիվ ու կոնկրետ
զեկավարության ու ոժանդակության գործն ապահո-
վելու, կատարվող սխալներն ու չարաբկումները ժա-
մանակին մերկացնելու և ուղղելու համար կարևորա-
գույն նշանակություն ունի ինֆորմացիայի գործը:

Սակայն չնայած այդ կարևորագույն նշանակու-
թյան՝ վոչ միայն տեղերում, այլև կենտրոնում թերա-
գնահատվում է այդ գործը, ըստ վորում՝

1. Մի շարք կենտրոնական գերատեսչություննե-
րում և ձեռնարկներում բացակայում են ինֆորմացիոն
բաժինները կամ սեկտորները և ինֆորմացիան սպա-
րակող պատասխանատու կատարածուները:

2. Նույնիսկ կենտրոնական վաստորեն բացա-
կայել և ինֆորմացիոն սեկտորը:

3. Այստեղ, ուր նույնիսկ ինֆորմացիոն սեկտոր-ներ կան՝ աշխատանքները կատարվում են համատեղության կարգով:

4. Ինֆորմացիոն աշխատանքների ասպարիզում ծրագիր-պլան չկա և ամեն ինչ կրում է սոսկ ձևական, դիվանական-վիճակադրական տրաֆարետային բնույթ և զուրկ է մարտական քաղաքական բովանդակությունից, գործնական կենդանի պատկերացումից:

5. Ինֆորմացիոն աշխատանքները կատարվում են սոսկ ապարատային կարգով և այդ աշխատանքում ընդդրկված չե խորհրդային մասսայական ակտիվը (կենտղործկոմի, ըջգործկոմների, քաղխորհուրդների, գյուղխորհուրդների անդամները, սեկցիաների, պատգամավորական խմբակների ակտիվը) և այլն:

6. Ինֆորմացիայի ասպարիզում չեն ողտագործվում այնպիսի կարեռ աղբյուրներ, ինչպես՝ հրահանգական հետազոտությունների, ստուգատեսների, բողոքների բյուրոնների, զանազան խորհրդակցությունների նյութերը, մամուլը և այլն:

17. Ստացված ինֆորմացիոն նյութերն ել իրենց հերթին շատ հաճախ մնում են գրասենյակներում չողագործված, չեն կատարվում այդ նյութերի ամփոփումները:

Այս և այլ հարակից բազմաթիվ թերությունները վերացնելու և ինֆորմացիայի գործն իր կոչման բարձրության վրա դնելու համար՝ խորհրդակցությունը համարում է անհրաժեշտ:

8. Մասսայականացնել ինֆորմացիոն աշխատանքները՝ և այդ աշխատանքներում ներդրավել խորհրդային հասարակական-ակտիվը՝ կենտղործկոմի, տեղական խորհուրդների ու գործկոմների, խորհրդային հասարակական մասսայական ողակների անդամներին և այլն:

9. Ոգտագործել ինֆորմացիոն նպատակներով բոլոր աղբյուրները, հատկապես՝ ա) մամուլը, բ) թերթերի չողագործված թղթակցությունները, գ) հրա-

հանգչական-հետազոտական նյութերը, դ) բողոքների բյուրոնների և այլ կարգի գանգատների ավլյաները, յե) կենտղործկոմի, գերատեսչությունների և այլ հիմնարկային ու մասնագիտական խորհրդակցությունների նյութերը, զ) կառավարական-հասարակական և այլ գործումները, ե) կենտղործկոմի, խորհրդադիրների և դործկոմների անդամների նամակները և այլն:

10. Վերացնել գրենական-հաշվետավական ինֆորմացիան, դարձնել այն կենդանի, գործնական, ուղերամացիան, դործնական, պարագաների ու բնագավառների:

11. Ապահովել ինֆորմացիոն գործի միասնականությունը և զեկավարությունը՝ թե հորիզոնական և թե ուղղահայց գծով:

12. Կանոնավորել ինֆորմացիայի փորձի փոխականությունը և ինֆորմացիոն գործի ասպարիզում աշխակությունը և կատարածությունը՝ սեկտորների, կատարածությունների խատող բաժնեների, սեկտորների, կառավարակցությունը՝ փոխադարձ, մշտական ու կենդանի գործակցությունը:

Ինֆորմացիոն գործի զեկավարության միասնականությունը և ինֆորմացիայի ասպարիզում աշխականությունը և ինֆորմացիայի ասպարիզում ապահովելու համար՝ ուսուղների գործակցությունն ապահովելու համար՝ և ֆեղացնել կենտղործկոմի ինֆորմացիոն սեկտորը՝ պարտավորեցնել նրան՝

13. Մամուլի, ուղերջի և այլ ուղիներով՝ ծավալել ու խորացնել խորհրդակցին իրավունքի ու շինարարության, կաղմ-մասսայական աշխատանքի և ինֆորմացիայի հիմնական ինֆիլտրները:

14. Կենտրոնացնել, ստուգել, ամփոփել և ուղարկել ժողկոմատների և այլ կենտրոնական հիմնարկութերի, ձեռնարկությունների և կազմակերպությունների, ինֆորմացիոն աշխատանքները, ապահովելով և ղերի կավարելով նրանց գործունեության պլանը:

15. Մշակել և հրապարակել ինֆորմացիոն աշխատանքների ձեռք, սիստեմներ, մեթոդներ թե՛ կենտրոնացների ձեռք, հատկապես՝ մեթոդներ, ապահովելով աշխատանքների համար:

16. Կատարել ստացված հանրապետական կարեռը կամպանիաների ինֆորմացիաների ընդհանուր ամփոփումները՝ ներկայացնելով դրանք թե՝ կենտղործկոմի Նախագահության և թե՝ այլ կենտրոնական հիմնարկ-ների նկատմամբ, ինչպես և տեղերին ուղարկելը:

17. Ընդհանրապես ձեռնարկել բոլոր միջոցները պլանավորելու, ղեկավարելու, միասնացնելու, աշխուժացնելու ինֆորմացիոն գործի կազմակերպությունը և աշխատանքները:

Նախընթաց հոդվածում հիշատակված նպատակի իրականացման համար պարագայութենել՝ —

18. Կենտղործկոմի կազմաժնին՝ ամենակարճ ժամանակամիջոցում հրավիրել ժողկոմատների և այլ գերատեսչությունների ու կենտրոնական հիմնարկ-կազմակերպությունների խորհրդակցություն՝ ֆնսարկելու և վրոշելու ինֆորմացիոն աշխատանքների վերակառուցումը, պրանակորությունը, ղեկավարությունը, ապահովել ժողկոմատները և այլ գերատեսչություններն ինֆորմացիոն սեկտորներով կամ ինֆորմացիայի պատասխանատու կատարածուների համապատասխան կադրերով։

19. Շրջգործկոմներին ու քաղխորհուրդներին՝ անհապաղ կաղմակերպել, քաղխորհուրդներին կից սեկտորներ, շրջգործկոմներում՝ առանձնադնել հատուկ աշխատակից, ղեկավարելու ինֆորմացիայի գործը, գլուխորհուրդներում՝ ունենալ ինֆորմացիոն խմբակներ, վորոնոց մեջ ընդդրեն դյուղական ակտիվը, կոլտնտեսականներին՝ խորհունտեսությունների հարցածայիններին, ապատ. խմբակների, սեկցիաների անդամներին, գյուղխորհրդի լիազորթերին, ուսուցիչներին, բժիշկներին, գյուղատնտեսներին և այլն։

Ինֆորմացիոն գործը համապատասխան կադրերով ապահովելու համար՝

20. Կենտղործկոմին կից և նրա կազմ. ու կադրերի բաժինների ղեկավարությամբ կազմակերպել միամյա կառանքացներ՝ պատրաստելու և վերապատրաս-

տելու կենտրոնական հիմնարկ-կազմակերպությունների՝ քաղխորհուրդների և Շրջգործկոմների համար ինֆորմատորներ։

21. Շրջգործկոմներին կից կազմակերպել հնգորյակոնսուլտացիա-ղաւառների՝ դյուղի ինֆորմացիոն աշխատանքներում ներգրավվածների համար։

22. Հանձնարարել կենտղործկոմի կազմբաժնի ինֆորմացիոն սեկտորին՝ իրազեկ պահել կենտրոնի ու տեղերի ինֆորմատորներին՝ ինֆորմացիոն գրական-գործնական նորություններին, հրահանգներին և այլն։

23. Հատկապես ներկայիս և մանավանդ շրջանի-դյուղի ինֆորմացիայի հիմնական շահագրգության առարկանել հետեւյալ խնդիրները՝

ա) խորհրդային դեմոկրատիայի կենսազործում, ինչպես և աղավաղումների վարչարարության դեպքեր։
բ) հեղափոխական որինականության ամրապնդման և այդ որինականության խախտումների յերեսությունները։

գ) հանրային գույքի՝ սոցիալիստական սեփականության պաշտպանության և այդ գույքի սեփականության հափշտակության, փչացման, անհոգատարության և այլ հարցերը։

դ) Կոլտնտեսական-խորհանտեսական շինարարությունը և նրանց տնտեսական-կազմակերպչական ամրապնդումը, խորհրդային կոլտնտեսական առևտուրի և այլ խնդիրները։

յե) կուտակցական-խորհրդային գծով տրված քաղաքական-տնտեսական առաջադրանքների կատարման ընթացքն ու արդյունքները։

զ) պայքարի ու աշխատանքի սիստեմների, մեթոդների, ձևերի և հատկապես կազմ-մասսայական աշխատանքների մասին։

ե) դասակարգացին թշնամու, կապիտալիստական-կուլակային-ղաւանքական կանոնադրության և այլ սոցիալապես, քաղաքականորեն և իդեոլոգիապես անհարազատ տարրերի

գիմադրության յերևույթները, այդ դիմադրության ձևերն ու մեթոդները և այլն.

Ը) խորհուրդների և կոլտնտեսական-աշխատավորական մասսաների գասակարգային զգոնության առկայության և բացակայության յերևույթներն ու արտահայտությունները և

Թ) ընդհանրապես լուսաբանել, պատկերացնել, տվյալ վայրի ու բնագավառի սահմաններում կատարվող աշխատանքի, վարչող պայքարի ամրողական նկարագիրը:

24. Համաձնաբարել կենտրոնական կազմաժնին՝ ինֆորմացիայի սեկտորի գծով՝ վորոշել կենտրոնի և տեղերի ինֆորմացիաների ստացման ու առաջման սփառմը, ձևերը, ժամկետները և միաժամանակ ինֆորմացիոն աշխատանքի սխեմաները մշտիկիս վերացնել ծավալով՝ բարդ ձևերը և ուշադրության կենտրոնը դարձնել հիմնական-սկզբունքային, մարտական-քաղաքական, առորյա-գործնական խնդիրները և այլն:

25. Համարել անհրաժեշտ՝ կենտրոնական կազմաժնի ինֆորմացիոն սեկտորի գծով՝ հրատարակել համապատասխան-դպրոցական համապատասխան-դպրոցական բյուլետեններ, վորոնք տային թե՛ գերատեսչությունների ու տեղերից ստացած ինֆորմացիաների ամփոփումները և թե՛ միաժամանակ ահազանդեյին քաղաքական գծի խեղաթյուրումները, մատնանշեյին կատարված սխալների ու պահանջմանները և այլն:

26. Փարագաճութեան համապատասխան ժամանակաշաբանը սահմանել սեկտորի, և հրաժանակիների, խմբակների Համար կանոնադրությունները, սխալները և այլն:

V.

Կադրերի պատրաստման մասին

Կադրերի խնդիրը՝ ինչպես սոցիալիստական շինարարության այլ բարոր բնագավառներում, նույնպես և պրոլետարական իշխանության, խորհուրդների գործունեության առաջարիզում՝ հանդիսանում է կարևորգույն հարցը:

64

Խորհրդակցությունն արձանագրում է, վոր կադրերի պատրաստության ասպարիզում վերջին տարում ձեռք են բերված վորոշ նվաճումներ՝ հատկապես ստորին կադրերի պատրաստության և վերապատրաստության ասպարիզում, վորպիսի նվաճումներն արտահայտվել են հետեւյալում՝

1. Ստորին խորհրդային կադրերի վերապատրաստության 1932 թ. պլանը հանրապետական մասշտաբով և քաղաքական տեսակետից կատարվել և նույնիսկ գերակատարվել է, չնայած մի շարք ըրջանների թերակատարման ու անկատարման:

2. Կազմակերպվել են Յերևանում 3 ամսյա գամարն-թացներ ազգային փոքրամասնությունների համար:

3. Երջանային և գյուղական ակտիվի վերապատրաստության գծով՝ Դարաչիչագի և Մանգլիսի գամարն-թացներում ավարտել են 40 հոգի և այլն:

Արձանագրելով հանդերձ այս նվաճումները՝ խորհրդակցությունը միաժամանակ շեշտում է հետեւյալ կարելոր բացերը՝ —

4. Մի շարք ըրջաններ (Լենինական, Վեդի, Ստեփանավան, Դիլիջան, Բայազետ, Ղամարլու, Բասարգեչար, Արթիկ) մինչ օրս ել առաջադրված դասընթացները չեն կազմակերպել:

5. Միանգամայն թույլ է յեղել ազգային փոքրամասնությունների ընդգրկումը դասընթացներում:

6. Անրավարար է յեղել դասախոսական-դասադպրոցների ընդգրկումը՝ չուրչել չափազատական ուժերի բացակայության առջևությունը:

7. Զգալի չափով բացակայել են դասագրքեր, ձեռնարկներ, ձբագրներ, մեթոդական գույքներներ և այլն:

8. Թույլ է յեղել հաջորդառությունը՝ թե սովորողների և թե՛ սովորածի:

9. Բացակայել է դասընթացների ծրագրների ու պարագմունքների միասնականությունն ու հետևողականությունը:

65

10. Թույլ ե յեղել կենտգործկոմի կադրերի բաժնի կենդանի-ոպերատիվ ղեկավարությունը՝ խորհրդային կադրեր պատրաստող կենտրոնական գերատեսչական կադրերի բաժինների, սեկտորների նկատմամբ:

Նկատի առնելով վերոհիշյալը՝ խորհրդակցությունը համարում ե անհրաժեշտ հետևյալը՝

11. Լրիվ կոմպլեկտավորել կենտգործկոմի կադրերի բաժինը՝ հատկապես կարող մեթոդիստով:

12. Հանձնարարել կադրերի բաժնին՝ ունենալ անմիջական ոպերատիվ հսկողություն և կենդանի ղեկավարություն խորհրդային կադրեր պատրաստող գերատեսչական-հիմնարկային կադրերի բաժինների, սեկտորների և այլնի նկատմամբ:

13. Պարտավորեցնել այն շրջգործկոմներին, վորոնք մինչ այժմ չեն կազմակերպել դասընթացներ՝ անհապաղ կատարել դա:

14. Առաջիկա տարվա դասընթացքներն ապահովել ձեռնարկներով, ծրագրներով, մեթոդական ցուցմունքներով:

15. Առանձին ուշադրություն դարձնել դասախոսական-դասաստվական կազմի վորակի և աշխատանքի սիստեմի վրա:

16. Բացի տեղական կարող ուժերից՝ դասընթացների համար ոգտագործել կենտրոնի կարող ուժերին՝ վորակեած շրջիկ դասախոսներ, վորոնք թե՛ իրենք դասախոսելին և թե՛ տեղում դասախոսներին ոժանդակելին:

17. Բոլոր շրջաններում կազմակերպել խորհրդային գյուղակտիվի վերապատրաստման միամայա դասընթացքներ այն հաշվով, վոր դրանք ավարտելին մինչ դարնանացանի կամպանիան:

18. Պարտավորեցնել Շրջգործկոմներին՝ ապահովել դասընթացքները չենքերով, վառելիքով, լուսավորությամբ, կահկարասիքով և այլն և կոմպլեկտավորել ու ղեկավարել դասախոսական կազմը, ունկնդիրների կադրը, հաշվի առնել կատարված աշխատանքը:

19. Հատկապես ուշադրություն դարձնել առաջիկա 1933 թ. ապահովելու բոլոր ազգային փոքրամասնությունները համապատասխան դասընթացքներով, կազմակերպելով ուսական և թրքական՝ Յերևանում և յեղիդական՝ Աբարանում:

20. Բացի տեղական դասընթացքներից՝ կենտգործկոմի կադրերի բաժնին կից կազմակերպել հեռակադարձական թարգմանություններ, այլ և՝ խորհրդային շինարարության ուղղութակությունը քաղաքային ու շրջանային միջին վորակի կադրեր պատրաստելու և վերապատրաստելու համար:

21. Միանգամայն անհրաժեշտ համարել անմիջապես ձեռնարկել կազմելու դասագիրք-ձեռնարկներ Խորհրդական Սահմանադրության և խորհրդային շինարարության, պետական-կառավարական կազմի և այլնի մասին:

22. Կազմակերպել կենտգործկոմի Նախագահության կից՝ Խորհրդային Շինարարության Տուն՝ կանոնավորելով ու սարքավորելով այն, կազմակերպելով գրադարան-ընթերցարան, դասընթացքներ, կոնսուլտացիաներ և ընդհանրապես դարձնելով այն խորհրդային շինարարության պրոպագանդային ու մոռսայականացման, խորհրդային կադրերի վերավորագրման կենտրոն:

23. Ոգտագործել Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի, «Խորհրդային իրավունքի և Խորհրդային Շինարարության» սեկցիան ուսումնասիրելու և խորացնելու պրոլետարական պետության, խորհրդային շինարարության հիմնական խնդիրները:

VI.

Հեղափոխական որինականության մասին
Հեղափոխական որինականությունը՝ «կարևորագույն մի միջոց ե՝ պրոլետարական դիկտուրայի ամբապնդման, բանվորների ու աշխատավոր գյուղա-

յիների շահերի պաշտպանության և աշխատավորների թշնամիների դեմ պայքարելու» (Ստալին):

Զնայած Հեղափոխական Ռուսականության նման արժեքավորման՝ հաճախ են այդ որինականության խախտման գեպքերը հատկապես գյուղում, վոր արտահայտվում են հետեւալ ուղղությամբ՝

1. Գյուղնախաղահները և միլիցիան յենթարկում են քաղաքացիներին ապօրինի տուգանումների և գանձումների:

2. Նկատվում են ապօրինի խուզարկումների և կալանքների հաճախակի գեպքեր:

3. Լինում են գեպքեր, յերք առանց լուրջ հիմնավորման աշխատավորմիջակ տնտեսատերերին ձայնագրկում են և ընդհակառակը՝ վորոշ վայրերում կուլակներին վերապահում ընտրական իրավունք:

4. Մի շարք տեղերում միջակ-տշխատավորական տնտեսությունները ճանաչվում են կուլակ-ուռներում տարրերը համարվում են աշխատավորական-միջակ:

5. Յերբեմն անհատական կարգով հարկվում են և կայուն առաջադրանք տրվում աշխատավոր տնտեսություններին, ինչպես և հակառակ:

6. Ակտիվ և մասսայական պայքար չի տարվում հանրային գույքի պաշտպանության ասպարիգում:

7. Խախտվում և վոտնահարվում են բանվորների և աշխատավորների բնակարանային, բանմատակարման և կուլտ-կենցաղային իրավունքները:

8. Արժանի չափով չեն պաշտպանվում քաղաքի և գյուղի մասնագետների, ուսուցիչների, առաջ քաշվածների իրավունքները:

9. Թույլ ե կոիվը սպեկուլյացիայի, վերագնորդության, այլ և պաշտոնական յուրացումների, գեղծումների և այլ չափարկումների դեմ:

10. Տրանսպորտի, տնտհաշվարկի, ֆինանսների և ընդհանրապես սոցիալիստական տնտեսության գաղգրացումն ապահովող որենքները հաճախ խախտվում են:

11. Հաճախակի յեն խախտվում՝ կարմիր բանականիններին և նրանց ընտանիքների անդամներին վերապահումած արտոնությունները և այլն:

12. Հեղափոխական որինականության խախտման առնչությամբ և վորպես բյուրոկրատիզմի արտահայտություններ՝ համարել բանվորների, կոլտնտեսականների, կարմիր բանակայինների և այլ աշխատավորների խնդիրների ու գանգատների քննարկության ձգձըդումները և այլն:

Հատկապես կոլտնտեսական շինարարության բնագավառում յերբեմն տեղի յեն ունենում հետեւալ ակընհայտ իրավախախտումները՝

13. Խախտվում են գյուղատնտեսական արտելի կանոնները, ինչպես վարչական կազմի նշանակումների, փոփոխությունների, նույնական բերքի բաշխման, անասունների ու տնամերձ փոքր այգիների, բանջարանցների հանրայնացման ուղղությամբ:

14. Հաճախակի յեն շրջանային ու գյուղական իշխանությունների վարչական միջամտությունները կոլտնտեսությունների յեկամուտների հատկացումներին և այլ ոպերատիվ անմիջական գործառնություններում:

15. Կատարվում են վաղաժամ հողաբաժանումներ, կոլտնտեսությունների վարչական կարգով խոշորացումներ ու փոքրացումներ և այլն:

16. Վարչական կարգով են քննարկվում և լուծում ստանում այն վեճերը, վորոնք հանձնված են հատուկ հողային հանձնաժողովների իրավասության:

17. Յեկ ընդհանրապես հաճախակի յեն կոլտնտեսության և կոլտնտշինարարության կամավորության սկզբունքի խախտումները:

Ի նկատի առնելով վերոհիշյալը և նպատակ ունենալով վերացնել այս ամենը՝ խորհրդակցությունը համարում է անհրաժեշտ ձեռնարկել հետեւալ միջոցները՝

18. Մասսայականացնել հեղափոխական որինականության սկզբունքներն ու խնդիրները կենտրոնական և տեղական մամուլի, առանձին գրքերի, բրոշյուրների

և այլ Հրատարակությունների միջոցով, այլև կազմակերպել դասախոսություններ, զրույցներ, զեկուցումներ՝ գործարաններում, կոլտնտեսություններում; պատիմքակներում, կարմիր բանակային մասերում, դյուղացու տներում, խորհրդակցություններին, համագումարներին և այլն:

19. Ուժեղացնել «Խորհրդային Շինարարության» ժուրնալը և միաժամանակ Հրատարակել խորհրդային իրավունքին և խորհրդային շինարարության նվիրված ժողովածուներ, գրքեր, բրոշյուրներ:

20. Կանոնավորել և արագացնել «Որենքների և կարգադրությունների ժողովածու»-յի Հրատարակությունը, պատշաճ բաշխումը և ժամանակին առաջումը տեղերին, այլ և առանձին քաղաքական արժեք ունեցող որենքների, մանավանդ Սահմանադրության և խորհուրդների կենտրոնական ու տեղական որդանների կանոնադրությունների մասսայական Հրատարակությունները յերեք լեզուներով:

21. Մարգսիդմ-Լենինիզմի ինստիտուտի «Խորհրդային իրավունքի և Խորհրդային Շինարարության» սեկցիայի միջոցով գիտականորեն ուսումնասիրել խորհրդային իրավունքի ու շինարարության և հատկապես խորհրդների կազմ-մասսայական ինդիրները:

22. Հատուկ ուշադրություն դարձնել խորհրդային կադրերի պատրաստման վրա և այդ նպատակով ապահովել միջին և ստորին վորակի աշխատավորների վերապատրաստության գործը:

23. Վերակառուցել ԿԳԿ-ի կադրերի բաժնի աշխատանքներն այնպես, վոր գյուղական, քաղաքային և ընդանային կադրերի դասընթացքների կոմպլեկտավորումը, կարող դասախոսների կազմը, ծրագրները, ձեռնարկները ժամանակին ապահովվեն, ուսուցման վորակը լինի բարձր, ուսման ընթացքն ու արդյունքը ստուգի և այլն:

24. Ուժեղացնել պայքարը՝ լիկ կատարելու ԽՍՀՄ

կենտրոնական ժողովականության 1932 թ. հունիսի 25-ի վորոշումը «Հեղափոխական Ուժինականության մասին» և մասնավորապես՝

25. Ստուգել հեղափոխական ուժինականության խախտումները պաշտոնյաների կողմից և արագ ընթացք տալ այդ իրավականության, հատկապես այն դեսպե-վարչական քննարկության, հատկապես այն դեսպե-վարչական քննարկուների, մասնագետների, վաստակավորների և այլ իրավունքներն ու շահերը:

26. Ամեն կերպ ուժեղացնել գանգատների բյուրո-ների աշխատանքները՝ ներգրավելով այդ աշխատանք-ներում քաղաքի և գյուղի ակտիվիտին՝ բանվորներին, կոլտնտեսականներին, առանձնապես ուշ դարձնելով կանոնադրությունների մասսայական Հրատարակությունները յերեք լեզուներով:

27. Ստուգել Հրատարակված պարտադիր վորոշում-ների որինականությունը և առանձնապես վարչական կարգով սահմանված տուգանքների և այլ տուժերի կարգի սահմանված տուգանքների վարչական գան-պրակտիկան, վերացնելով ապօրինի վարչական գան-ձումները, տուգանքները և այլն:

28. Վերջ տալ ապօրինի, վոչ ռեալ կայուն առաջա-դրանքներին, ապակուլակացումներին, սոցիալական շերտավորման անարդար, անկանոն դեպքերին, չթու-լացնելով յերբեք պայքարը կուլակային ելեմենտների դեմ:

29. Պարտավորեցնել դատական և դատախազական որդաններին արագորեն մերկացնել ու հետապնդել և խստորեն դատել այն բոլոր պաշտոնյաներին, վորոնք խախտում են աշխատավորների իրավունքներն ու շա-հերը, առանձնապես ապօրինի կալանքների, խուզար-կությունների, բռնադանձումների և այլ որինազնց բացերի համար:

30. Շարունակել և ուժեղացնել պայքարը սպեկուլա-յանտների, վերագնորդների, հանրային-սոցիալիստա-կան գույքի հափշտակիչների, գեղծարարների, յուրաց-կան գույքի հափշտակիչների, գեղծարարների, յուրաց-

նողների և այլոց դեմ, վորոնց հանցագործությունն ուղղված է պրոլետարական պետության, սոցիալիստական տնտեսության, աշխատավորների նյութական-կենցաղային, կուլտուրական շահերի դեմ:

31. Մասնավորապես ուժեղացնել պայքարն այն պաշտոնյաների դեմ, վորոնք վոտնձդում են կոլխոզինարարության դեմ և հետևապես խախտում են կամավորության սկզբունքը, վարչության և այլ որդանների բնտրականության կարգը, կամայականորեն տնորինում կոլտնտեսական գույքը, թույլատրում վարչարարական-հրամանատարական քայլեր և այլն—ամենախիստ պատասխանատվության յենթարկելով բոլոր մեղավորներին:

32. Վերացնել խորհրդային-կոլտնտեսական առերի ծավալման որենքների ամեն կարգի խախտումները, արգելելով անասունների, թռչունների հանրայնացումը, պետության հանդեպ իրենց պարտականությունները կատարող կոլտնտեսությունների և աշխատավորմենատեսների մթերքների անարգել իրացումը և այլն:

33. Արդելել գատական և գատախաղական բնագավառների աշխատավորների հեռացումը, տեղափոխությունը և նշանակումն առանց իրավասու մարմինների համաձայնության:

34. Պարտավորեցնել քաղխորհուրդներին և ըրջործկոմներին՝ պարբերաբար լսել գատական և դատ ախաղական որդանների դործունեության զեկուցումը, ապահովել հեղափոխական որինականության հեռարկությունների ու պաշտոնյաների կազմակերպության կան, բնակարանային, կուլտ-կենցաղային և այլ կուրիքները, առանց յերբեք միջամտելու նրանց կոնկրետ դործերի քննարկության ու վճռահատության: Պարտավորեցնել նույնը նաև գյուղխորհուրդներին՝ գյուղկու-

միններին ու պաշտոնյաներին՝ իրենց հերթին ուժեղացնել պայքարը հանուն հեղափոխական որինականության ամրապնդման և այս ասպարիզում կատարվող աշխատանքներին ներգրավել քաղաքի և գյուղի հասարակական ակտիվը և այլն:

36. Միջնորդել կենտգործկոմի առաջ լսել հատուկ և ընդհանուր գեկուցում հեղափոխական որինականության ամրապնդման ու խախտումների մասին և ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները, վորպեսզի խորհրդադային հիմնարկությունները, հասարակական կազմակերպությունները և տնտեսական ձեռնարկությունները, բոլոր կենտրոնական ու տեղական մարմիններն անշեղորեն կիրառեն խորհրդային որենքները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. Պ. ՍՏԱՄԲՈԼՅՅՈՒՆ.— Խորհուրդների կազմ-մասսայական աշխատանքների հիմնական խնդիրները	3
2. Ռ. ԴԱՇՏՈՅՅՈՒՆ.— Ավելի բարձր աստիճանի հասցնել խոր- հուրդների կազմ-մասսայական աշխատանքները	12
3. Հանրապետական կազմ-մասսայական խորհրդակցության բանաձևերը.—	
I. Ա. Խորհուրդների կազմ-մասսայական աշխա- տանքների հիմնական խնդիրները	33
II. Խորհուրդների կազմ-մասսայական աշխատանք- ների հատուկ բնագավառները	37
Բ. Կենտղործկոմի կազմ բաժնի գծով	37
Գ. Ժողկոմատների և այլ հանրապետական հիմ- նարկ-ձեռնարկ-կազմակերպությունների գլ- ծով	40
Դ. Շրջգործկոմների կազմ-մասսայական աշ- խատանքների գծով	42
V. Քաքաղային և բանագանային խորհուրդների գծով	44
Զ. Գյուղական խորհուրդների գծով	50
III. Պարբերական մամուլի մասին	57
IV. Ինքորմացիոն աշխատանքների մասին	59
V. Կաղըրերի պատրաստման մասին	64
VII. Հեղափոխական որինականության մասին	67



ՀՀ Ազգային գրադարան



NL0218490

39.855